

ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը Հայաստանի Հանրապետության միակ պետական բարձրագույն կրթօջախն է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 1994թ. թիվ 440 որոշմամբ Իջևանի տարածաշրջանային քոլեջից վերակազմավորվել է որպես Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ: Դժվար ժամանակներում է ծնունդ առել Իջևանի մասնաճյուղը, ու թեև ընդամենը 15 տարեկան է, բայց իր գիտամանկավարժական գործունեությամբ, իր տված բարձրորակ շրջանավարտներով, մարզի սոցիալտնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի տարբեր ոլորտներում կատարած իր դերով, Հայաստանի Հանրապետության հյուսիսային սահմանամեծ տարածքների բնակչությանը մայր հողի վրա պահելու և աղետալի արտահոսքը կանխելու հայրենանվեր գործունեությամբ բացառիկ տեղ ու նշանակություն ունի ոչ միայն մարզային, այլև հանրապետական մակարդակով:

Կրթօջախը բարեփոխումներով հարուստ տարեգրություն ունի, որը պայմանավորված է ուսումնագիտական գործընթացի կայունացման ու զարգացման, ուսումնական ծրագրերի ու պլանների կատարելագործման ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքներով, տնտեսական հարաբերություններին համապատասխանող մասնագիտությունների նորացմամբ, թարմացվող ուսումնական կանոնակարգերով, աշխատանքային կարգապահության նորմերի ընդունմամբ ու կիրառմամբ:

Կրթօջախի հիմնական առաքելությունը գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համապատասխան շրջանավարտներ պատրաստելն է, գերակա նպատակը՝ տարածաշրջանում հայագիտության, հումանիտար, սոցիալտնտեսական, բնական գիտությունների և մշակույթի զարգացումը: Առանձնահատուկ առաքելություն ունի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետը՝ զարգացնել տարածաշրջանային /ոչ միայն/ ժողովրդական հին ու նոր արհեստները, դրանք հասցնել արվեստի աստիճանի և դարձնել կիրառելի:

Առաջնորդվելով Երևանի պետական համալսարանի ռազմավարական ծրագրով և ելակետ ընդունելով այն՝ Իջևանի մասնաճյուղը իրականացնում է իր առջև դրված նպատակների ու խնդիրների առաջընթացն ապահովող ռազմավարական ծրագիրը:

Ըստ այդ գործընթացի՝ կրթօջախը լինելու է ուսանողակենտրոն միջավայր, որ ուսանողներին հնարավորություն է տալու լիարժեքորեն դրսևորելու իրենց մտավոր կարողությունները: Դրա համար հաստատությունն ունի և՛ համապատասխան

նյութատեխնիկական բազա, և՛ բարձր որակավորմամբ պրոֆեսորադասախոսական կազմ, որ հրավիրված է Երևանի պետական համալսարանից և համալրված տեղացի որակյալ մասնագետներով, որոնցից շատերը արդեն ունեն գիտական կոչումներ: Մասնաճյուղն ունի համամասնաճյուղային համակարգչային կենտրոն, 4 արվեստանոց, մարզադահլիճ, գրադարան՝ իր ընթերցասրահով: Համացանցային կապը գործում է և՛ համակարգչային լսարաններում, և՛ գրադարանում: Ստեղծվում է մասնաճյուղի համացանցային կայքը, որը հնարավորություն կտա ուսումնառության ամբողջ գործընթացը «ներքին սպառողից» ուղղել «արտաքին սպառողին»:

Ուսումնական ծրագրերի կառուցվածքն ու բովանդակությունը, ուսումնառության արդյունքի գնահատման չափանիշները աստիճանաբար համապատասխանեցվում են հանրապոտության լավագույն կրթօջախների և եվրոպական առաջավոր փորձին:

Որակի բարձրացման գործընթացը Իջևանի մասնաճյուղում հետևողականորեն վերանայվում է և վերելք ապրում:

Ելնելով Բոլոնիայի գործընթացի պահանջներից՝ մասնաճյուղը որպես հիմնարար արժեք՝ ընդունում է ուսանողի բազմակողմանի զարգացումը, մասնագիտական հարուստ գիտելիքների ու գործնական կարողությունների ձեռքբերումը և իր հիմնական առաքելությունը համարում գիտելիքի ստեղծումը, գիտելիքի փոխանցումն ու տարածումը:

Ժամանակի առաջնահերթ հրամայականը համարելով կրեդիտային համակարգի ամբողջական ու լիարժեք ներդրումը և կիրառելով այն՝ 1554 ուսանող ունեցող հաստատությունը նկատելի առաջընթաց և բարեփոխումներ է արձանագրել: Կրեդիտային համակարգը գործում է նաև մինչհամալսարանական կրթության և հեռակա ուսուցման բաժնում, ուր այժմ սովորում են 602 ուսանող:

Մեր ժողովրդի համար կրթությունն ու գիտությունը եղել են ազգապահպան ամենահզոր գործոնները: Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը բարձրորակ շրջանավարտներ պատրաստելու իր հայրենանեվեր առաքելությամբ ծառայում է այդ նվիրական գաղափարին...

ՏՆՕՐԵՆ

Ս.Ա.ԱՌԱԶԵԼՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***Մասնագետների պատրաստում*

Դասիչ	Մասնագիտության անվանումը	Աստիճանը
ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
010500	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	բակալավր
020800	Բնապահպանություն և բնօգտագործում	բակալավր
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
080000	Տնտեսագիտություն տեսություն	բակալավր
100100	Մերվիս	բակալավր
ՀՈՒՍԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
030400, 052600	Պատմություն	բակալավր
051000	Մանկավարժություն և հոգեբանություն	բակալավր
031300, 053000	Հայոց լեզու և գրականություն	բակալավր
031300, 053100	Անգլերեն լեզու	բակալավր
031300, 053100	Ֆրանսերեն լեզու	բակալավր
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
071000	Կիրառական արվեստ	բակալավր

**2009-2010 ուստարվա ընդունելության քննությունները
և անցողիկ միավորներն ըստ մասնագիտությունների**

N	ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ընդունելության քննություններ				Անցողիկ միավորներ		
		մրցութային			նշ մրցութային	անընթաց	վճարովի	վճարովի /առ/
	1	2	3	4	5	6	7	8
	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ							
1	Պատմություն	ՀԺՊ/զ/	ԸՊ/զ/ Օսլ/զ	Հլ/զ/		39.1	31.3	24.8
2	Հայոց լեզու և գրականություն	Հլ/զ/	Հլգ/բ/	ՀԺՊ/զ / Օսլ/զ/		30.3	27	25
3	Մանկավարժություն և հոգեբանություն	Հլ/զ/	ՀԺՊ/զ/	Ռլ/զ/ Օսլ/զ/		32.3	25.8	
4	Ֆրանսերեն լեզու	Ֆլ/զ/	Ֆլ/բ/	Հլ/զ/		49.3		33.6
5	Անգլերեն լեզու	Անգլ/զ /	Անգլ/բ/	Հլ/զ/		41.5		28.8
	Տնտեսագիտական ֆակուլտետ							
6	Տնտեսագիտության տեսություն	Մ/զ/	Հլ/զ/	Օսլ/զ/		42.6	35.6	29.3
7	Սերվիս	Անգլ/զ /	ՀԺՊ/զ/	Հլ/զ/		40.3	25.8	
	Բնագիտական ֆակուլտետ							
8	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	Ֆ/զ/	Մ/զ/		Հլ/զ/	20.3	16.8	
9	Բնապահպանություն և բնօգտագործում	Կ/զ/	Ք կամ Ֆ	Հլ/զ/		22.3	16	
	Կիրառական արվեստի ֆակուլտետ							
10	Կիրառական արվեստ	Գծն.	Գուն.	Կոմպ.	Հլ/զ/	37	26	24

ԱՍԲԻՈՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	ՖԱԿՈՒԼՏԵՏ, ԱՍԲԻՈՆ	Պրո- ֆեսոր	Դո- ցենտ	Ասիս- - տեն տ	Դասա- խոս	Ընդա- մենը
	<i>ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԱԿՈՒԼՏԵՏ</i>					
1.	Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	-	6	2	5	12
2.	Ընդհանուր ֆիզիկայի	-	5	1	2	8
3.	Անտառագիտության	1	8	2	2	13
	<i>ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ</i>					
1.	Ընդհանուր տնտեսագիտության	1	4	4	5	14
2.	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	-	2	4	3	9
	<i>ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ</i>					
1.	Պատմության և քաղաքագիտության	2	5	4	6	17
2.	Մանկավարժության և հոգեբանության	1	3	5	6	15
3.	Հայոց լեզվի և գրականության	-	4	5	5	14
4.	Օտար լեզուների	-	2	1	13	16
	<i>ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ</i>					
1.	Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի	-	1	-	7	8
2.	Գծանկարի, գունանկարի	-	1	3	3	7
1.	Հ ա մ ա մ ա ս ն ա ճ յ ու ղ ա յ ի ն Ֆիզիկական դասատիարակության և քաղաքացիական պաշտպանության ամբիոն	-	-	-	5	5

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ Կ Ա Ձ Մ Ը

N	Ազգանուն, անուն, հայրանուն			Պաշտոնը, գիտական աստիճանը
1.	Առաքելյան	Սամվել	Արշավիրի	ԵՊՀ ԻՄ տնօրեն, խորհրդի նախագահ, պատմ. գիտ. թեկնածու
2.	Գրիգորյան	Ալեքսանդր	Կոստանտինի	ԵՊՀ պրոռեկտոր, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու
3.	Դուլարյան	Արմեն	Հրանտի	Տավուշի մարզպետ
4.	Դալումյան	Արծրունի	Սուրենի	«ՃՇՎ» Իջևանի ՓԲԸ գործ.տնօրեն, գործարար
5.	Ներսիսյան	Վարուժան	Նարինանի	ՀՀ Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետ
6.	Գևորգյան	Աշոտ	Շահենի	ՀՀ Տավուշի մարզային դատախազի տեղակալ
7.	Անանյան	Գարուշ	Գուրգենի	Փոխտնօրեն
8.	Ստեփանյան	Նելլի	Գրիգորի	Գիտական քարտուղար
9.	Մակարյան	Անուշավան	Հայկարամի	Տնօրենի խորհրդական, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու
10.	Դավթյան	Արկադի	Յոլակի	Ուսումնամեթոդական բաժնի վարիչ
11.	Յուզույան	Արտակ	Վոլոդյայի	Բնագիտ.ֆակ. դեկանի պաշտ.ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու
12.	Խուրավերդյան	Նելլի	Բարկենի	Տնտ.ֆակ.դեկանի պաշտ. տեխ.գիտ.թեկնածու
13.	Ալեքսանյան	Վարդան	Արամայիսի	Հ/գ ֆակ. դեկանի պաշտ.պատմ.գիտ.թեկնածու
14.	Ալվազյան	Կամո	Բենիկի	Կիր.արվ.ֆակ.դեկանի պաշտ.տեխ.գիտ.թեկնածու
15.	Զուրաբյան	Մարատ	Հովհիկի	Սինչիամ. կրթ. և հեռակա ուսուց բաժ.վարիչ,բան.գիտ.թեկնածու
16.	Մխիթարյան	Մելանյա	Մեսրոպի	Գլխավոր հաշվապահ
17.	Գալումյան	Աշոտ	Գրիգորի	Բարձր.մաթ. և ինֆ.ամբ. դոցենտ, ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու
18.	Նահապետյան	Ռաֆիկ	Ասքանազի	Պատմ. և քաղ.ամբ.վարիչի պաշտ. պատմ.գիտ.դոկտոր
19.	Աբրահամյան	Հենրիկ	Մուշեղի	Պատմ. և քաղ. ամբ. պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր
20.	Սկրտումյան	Մելսիկ	Պարզևի	Մանկ. և հոգ. ամբ. վարիչի պաշտ. հոգ. գիտ. դոկտոր
21.	Վարդանյան	Խաչատուր	Գարուշի	Հ.լեզվի և գրակ. ամբիոնի դոցենտ, բան.գիտ.թեկնածու
22.	Հովսեփյան	Վոլոդյա	Երվանդի	Ընդհ. տնտ. ամբ. վարիչի պաշտ., տնտ.գիտ.թեկնածու
23.	Ասիլբեկյան	Պավել	Նորիկի	Տուրիզմի կառ. և մշակ. ամբիոնի վարիչի պաշտ.
24.	Հարությունյան	Լարիսա	Աշոտի	Ֆիզ. դաս. և քաղ. պաշտ. ամբիոնի վարիչի պաշտ.
25.	Նավոյան	Վարազդատ	Խաժակի	Բարձ. մաթ. և ինֆ. ամբ. դոցենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու
26.	Փաշինյան	Աշոտ	Ռուբիկի	Տավուշի մարզպետարանի կրթության վարչության պետ
27.	Հովհաննիսյան	Ալբերտ	Սարգսի	Իրավախորհրդատու
28.	Մարգարյան	Ալեքսան	Շամիրի	Ընդհ. ֆիզ. ամբ.ասիստ., մասնաճյուղի արհմիության նախագահ
29.	Առուստամյան	Ալվինա	Վաղարշակի	Գրադարանի վարիչ
30.	Սահակյան	Նաիրի	Արտավազդի	Հ/ գ.ֆակ.«Պատմություն» մասն. 3-րդ կուրսի ուս. ՈՒԳԸ-ի նախագահ
31.	Թամրազյան	Թաթուլ	Էմիլի	Հ/գ.ֆակ.«Պատմություն» մասն. 4-րդ կուրսի ուս., ուս. խորհրդի նախ.
32.	Ասիլյան	Ռուզան	Արտեմի	Տնտ. ֆակ.«Տնտեսագիտ. տես.» մասն. 4-րդ կուրսի ուսանող
33.	Գասպարյան	Նարեկ	Վարդգեսի	Տնտ. ֆակ. «Մեթոդ» մասն. 4-րդ կուրսի ուսանող
34.	Ճաղարյան	Նաիրի	Միխայիլի	Տնտ. ֆակ. «Տնտեսագիտ. տես.» մասն. 2-րդ կուրսի ուսանող
35.	Ալավերդյան	Սլավիկ	Սամվելի	Բանգիտ. ֆակ. «Մաթ. ինֆ.,ֆիզ.» մասն. 2-րդ կուրսի ուսանող

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Տնօրեն
Առաքելյան Սամվել Արշավիրի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
Փոխտնօրեն
Անանյան Գարուշ Գուրգենի, ասիստենտ
Տնօրենի խորհրդական
Մակարյան Անուշավան Հայկարամի, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
Գիտական քարտուղար
Հատուկ բաժնի վարիչ
Ստեփանյան Նելլի Գրիգորի
Իրավախորհրդատու
Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի տնօրեն
Հովհաննիսյան Ալբերտ Սարգսի
Արհկոմիտեի նախագահ
Մարգարյան Ալեքսան Ծամիլի
Գլխավոր հաշվապահ
Մխիթարյան Մելանյա Մեսրոպի
Ուսումնամեթոդական բաժնի վարիչ
Դավթյան Արկադի Ցոլակի
• Ուսումնամեթոդական բաժնի վարիչի տեղակալ
Առուշանյան Նաիրա Սուրենի
Միջհամալսարանական կրթության և հեռակա ուսուցման բաժնի վարիչ
Զուրաբյան Մարատ Հովիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
Ընդհանուր բաժնի վարիչ
Եզանյան Վարդիշաղ Մամիկոնի
Կադրերի բաժնի վարիչ
Աբազյան Նարինե Ժորայի
• Արխիվավար
Մարության Գրետա Սարիբեկի
Գրադարանի վարիչ
Առուստամյան Ալվինա Վաղարշակի
Համամասնաճյուղային համակարգչային կենտրոնի վարիչ
Խաչատրյան Տաթևիկ Վասիլի
Տնտեսական մասի վարիչ
Պետրոսյան Էդիկ Հայկի

**Սովորողների կազմը
Առկա ուսուցում
Բակալավրիատ**

Ֆակ .	Մասնագիտություններ	<i>Ուսանողների թիվը՝ 1176</i>							
		I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
		պ պ	վճ	պ պ	վճ	պպ	վճ	պպ	վճ
ՀԳՖ	Պատմություն	13	28	18	29	18	25	18	25
	Հայոց լեզու և գրականություն	13	12	10	23	12	21	13	21
	Մանկավարժություն և հոգեբանություն	13	7	12	26	12	25	10	26
	Ֆրանսերեն լեզու և գրականություն	4	8	3	14	3	2	3	9
	Անգլերեն լեզու և գրականություն	9	16	4	16	2	8	0	0
ՏՖ	Տնտեսագիտության տեսություն	15	27	13	30	15	37	15	33
	Սերվիս	9	11	9	19	8	28	8,0 0	19
ԲԳՖ	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	15	8	14	12	15	25	15	16
	Բնապահպանություն և բնօգտագործում	6	3	8	23	7	20	7	14
ԿԱՖ	Կիրառական արվեստ	11	23	10	30	11	27	12	17
Ընդամենը		108	143	101	222	103	218	101	180

Հեռակա ուսուցում Բակալավրիատ					
2009-10 ուստարվա I կիսամյակ	Մասնագիտություն	<i>Ուսանողների թիվը՝ 594</i>			
		I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս
	Պատմություն	43	32	27	35
	Հայոց լեզու և գրականություն	27	22	22	18
	Մանկավարժություն և հոգեբանություն	42	23	29	26
	Տնտեսագիտություն	34	31	32	
	Կիրառական մաթեմատիկա	15	18	25	17
	Բնօգտագործում և բնապահպանություն	35	21	20	
Ընդամենը		196	147	155	96

	Մասնագիտություն	Ուսանողների թիվը՝ 519			
		I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս
2009-10 ուստարվա II կիսամյակ	Պատմություն	47	32	27	37
	Հայոց լեզու և գրականություն	28	22	22	18
	Մանկավարժություն և հոգեբանություն	41	22	27	28
	Տնտեսագիտություն	33	31	36	
	Կիրառական մաթեմատիկա	20	23	26	18
	Բնօգտագործում և բնապահպանություն	38	20	19	
	Ընդամենը	207	118	130	64

Սովորողների կազմն ըստ ուստարիների /առկա ուսուցում/

Ֆակուլտետներ	Բակալավրիատ				
	2006	2007	2008	2009	2010
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	535	555	552	531	536
Տնտեսագիտական ֆակուլտետ	276	281	314	296	289
Բնագիտական ֆակուլտետ	267	301	233	208	176
Կիրառական արվեստի ֆակուլտետ	181	186	150	141	137
Ընդամենը	1259	1323	1249	1176	1138

Շրջանավարտներ

	Ֆակուլտետ	2009թ.				2010թ.			
		Բակալավրիատ /գերազանցության դիմումով/	այդ թվում՝ նախորդ տարիներից	մագիստրա-տուրա	ընդամենը	Բակալավրիատ /գերազանցության դիմումով/	այդ թվում՝ նախորդ տարիներից	մագիստրա-տուրա	ընդամենը
ՀԳՖ	Պատմ. /իր.հիմունք./	54/8/			54	41/8/	2		41
	Հայոց լեզու և գրակ.	31/6/			31	33/1/			33
	Մանկավարժ. և հոգեբան.	40/6/			40	36/4/			36
	Ֆրանսերեն լեզու	12			12	12/2/			12
Տնտ. ֆ.	Տես. տնտեսագիտ.	42/4/	5		47	45/6/	1		45
	Սոց. մշ.ծառ. և զբոս.	24/4/			24	27/3/			27

Բնագ. Ֆակ.	Մաթ. ինֆ.	21/4/			21	18/3/			18
	Ֆիզ. ինֆ.	13/1/	1		14	13/1/			13
	Անտ. և անտառայուր. տնտ.	18/3/	1		19	22/4/			22
Կ.ա.ֆ.	Դիզայն	13/6/	1		14				
	Կիր. զարդ. և ժող. արհ.	22/5/	2		24	30/4/			30
	Ընդամենը	290/51	10		300	277/36	3		277

Շրջանավարտներն ըստ տարիների

	Ֆակուլտետ, կենտրոններ	Բակալավրիատ					Ընդամենը				
		2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010
ՀԳՖ	Պատմություն	37	46	47	54	41	37	46	47	54	41
	Հայոց լեզու և գրականություն	35	34	31	31	33	35	34	31	31	33
	Մանկավարժ. և հոգեբան.	26	37	26	40	36	26	37	26	40	36
	Ֆրանսերեն լեզու			8	12	12			8	12	12
Տնտ. ֆ.	Տեսական տնտեսագիտություն	30	36	36	47	45	30	36	36	47	45
	Մոց. մշ. ծառ. և զբոսաշրջություն	16	17	18	24	27	16	17	18	47	45
Բնագ. ֆ.	Մաթ. ինֆ.	19	17	19	21	18	19	17	18	24	27
	Ֆիզ. ինֆ.	15	17	15	14	13	15	17	19	21	18
	Անտառագիտություն	14	17	18	19	22	14	17	18	19	22
Կ.ա.ֆ.	Դիզայն	9	15	10	14		9	15	10	14	
	Կիրառ. զարդ., դիզ. և ժող. արհ.	11	12	20	24	30	11	12	20	24	30
	Ընդամենը	212	248	248	300	277	212	248	248	300	277

**Քննաշրջանի արդյունքները
Բակալավրիատ**

Ձմեռային քննաշրջան				
Ֆակուլտետ	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմություն
ԲԳՖ	146	68	12	53.4
ՏՖ	219	100	24	54.8
ՀԳՖ	401	161	49	59.9
ԿԱՖ	109	64	7	41.3
Ընդամենը	875	393	92	55.2
Ամառային քննաշրջան				
Ֆակուլտետ	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմություն
ԲԳՖ	201	87	15	56.7
ՏՖ	291	146	38	49.8
ՀԳՖ	529	237	45	55
ԿԱՖ	138	74	8	46.4
Ընդամենը	1159	544	106	53.1

**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
Ուսանողների մասնակցությունը հարցմանը

Հ/Հ	Ֆակուլտետ	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ
1	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	77.8	
2	Տնտեսագիտական ֆակուլտետ	73.3	
3	Բնական գիտությունների ֆակուլտետ	78.3	
4	Կիրառական արվեստի ֆակուլտետ	66.0	
	Ընդամենը	75.3	

Հարցման արդյունքներն ըստ ֆակուլտետների և ամբիոնների

Հ/Հ	Ֆակուլտետ, ամբիոն	2009-10 ուստարի		
		1-ին կիս.	2-րդ կիս.	Միջինը
1	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	4.37	4.47	4.42
	Պատմության և քաղաքագիտության	4.39	4.49	4.44
	Հայոց լեզվի և գրականության	4.39	4.39	4.39
	Մանկավարժության և հոգեբանության	4.32	4.45	4.385
	Օտար լեզուների	4.41	4.58	4.495
	Ֆիզ. կուլտուրայի և քաղ. պաշտպանության	4.15	4.37	4.26
2	Տնտեսագիտական ֆակուլտետ	4.36	4.44	4.4
	Ընդհանուր տնտեսագիտության	4.34	4.36	4.35
	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	4.39	4.56	4.475
3	Բնական գիտությունների ֆակուլտետ	4.37	4.27	4.32
	Անտառագիտության	4.49	4.54	4.515
	Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	4.3	4.16	4.23
	Ընդհանուր ֆիզիկայի	4.29	4.04	4.165
4	Կիրառական արվեստի ֆակուլտետ	4.46	4.64	4.55
	Գծանկարի և գունանկարի	4.57	4.72	4.645
	Դեկորատիվ կիրառական արվեստի	4.39	4.57	4.48

Դեկանի, դեկանի տեղակալների և դեկանատների աշխատակիցների գնահատման արդյունքներն ըստ ֆակուլտետների

	Ֆակուլտետ	2009-10 ուստարի			
		1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
		Դեկան և դեկանի տեղակալներ	Դեկանատի աշխատակիցներ	Դեկան և դեկանի տեղակալներ	Դեկանատի աշխատակիցներ
1	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	4.63	4.39	4.61	4.73
2	Տնտեսագիտական ֆակուլտետ	4.82	4.75	4.85	4.91
3	Բնական գիտությունների ֆակուլտետ	4.97	4.73	4.80	4.93
4	Կիրառական արվեստի ֆակուլտետ	4.16	4.11	4.23	4.35

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿԵԻՌ****առ 01.01.2010**

(ամսաթիվ, ամիս, տարի)

ԱԿՏԻՎ	Տող	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջինը
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>
I. Ոչ ընթացիկ ակտիվներ		58,538
Հիմնական միջոցներ	010	
Ոչ նյութական ակտիվներ	030	
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070	
Ներդրումային գույք	071	
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	
II. Ոչ ընթացիկ ակտիվներ		
Նյութ	090	78
Արագամաշ առարկաներ	110	
Արտադրանք	130	
Ապրանքներ	140	
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	80
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	1316
Այլ դեբիտորական պարտքեր	180	15778
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	81892
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	
Առ հաշիվ անձինք	211	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	99,144
ՀԱՇՎԵԿԵԻՌ	230	157682

ՊԱՍԻՎ	Տող	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջինը
1	2	3
III. Սեփական կապիտալ		
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	240	
Էմիսիոն եկամուտ	250	
Կուտակված շահույթ	270	91,118
Պահուստային կապիտալ	280	
Ընդամենը սեփական կապիտալ	300	91,118
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330	32,960
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	32,960
V. Ընթացիկ պարտավորություններ		
Կարճաժամկետ բանկային վարկեր	370	
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	1,550
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	20,349
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	3,017
Կարճաժամկետ կրեդ. պարտքեր սոցիալական ապահով. գծով	420	5,479
Կրեդ. ժարտքեր աշխ-վարձի և աշխ-կիցների այլ կարճ. հատուց. գծով	430	202
Այլ կրեդիտորական պարտքեր	450	
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	480	3,007
Պրոֆ. անդամավճար	481	3,007
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	33,604
ՀԱՇՎԵԿՇԻՈՒ	500	157,682

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**01.01.2009 – 31.12.2009***(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))*

Ցուցանիշի անվանումը	Տող	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անդալական)
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>
Արտադր., ապր., աշխատ., ծառ. իրացումից հասույթ	010	311,646
Իրացված արտադր., ապր., աշխատ., ծառ. ինքնարժեք	020	218,194
Համախառն շահույթ (վնաս)	030	93,452
Իրացման ծախսեր	040	
Վարչական ծախսեր	050	85,116
Արտադր., ապր., աշխատ., ծառ. իրացումից շահույթ (վնաս)	060	8,336
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում	070	20,921
Ստուգման ակտ	071	20,771
Գործառնական այլ եկամուտներ	072	150
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	080	21,638
Տույժ, ստուգանք	081	423
Գործառնական այլ ծախսեր	082	21,210
Գործառնական շահույթ (վնաս)	090	7,619
Ֆինանսական ծախսեր	100	
Բաժնեմասն. մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	110	
Ընդհատ. գործ. վերագրելի ակտիվների վաճ. և պարտ. մար. շահույթ (վնաս)	120	
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում	130	3,343
Ոչ գործառնական եկամուտներ	131	3,343
Ոչ գործառնական ծախսեր	132	
Սովորական գործառնությունից շահույթ	140	10,962
Արտասովոր դեպքերից շահույթ	150	
Ջուտ շահույթ մախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցում	160	10,962
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	1,619
Ջուտ շահույթ մախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	9,343
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)	190	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)	200	

**«01» հունվարի 2010թ. - «31» դեկտեմբերի 2010թ.
Ժամանակահատվածի համար**

(դրամական միջոցների մուտքեր և ելքեր)

I Հ/Հ	Դրամական միջոցների մուտքերի (եկամուտների) հոդվածներ	Ընդամենը (հազ. դր.)
<i>Ընդամենը</i>		<i>374075</i>
այդ թվում՝		
1	Գործառնական գործունեությունից եկամուտներ	374075
այդ թվում՝		
1.1	Եկամուտներ՝ վճարովի ուսուցման ծառայությունից	280000
1.2	Եկամուտներ՝ պետական բյուջեից ստացված ֆինանսավորումից	90075
2	Գործառնական այլ եկամուտներից՝ ներառյալ ԱԱՀ	4000
3	Ոչ գործառնական եկամուտներից	

II Հ/Հ	Դրամական միջոցների ելքային (ծախսերի) հոդվածներ	Ընդամենը (հազ. դր.)
<i>Ընդամենը</i>		<i>374,080</i>
այդ թվում՝		
Ընթացիկ ծախսեր		356280
այդ թվում՝		
1	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր	235000
2	Կրթաթոշակի վճարման ծախսեր	21680
3	Ծնարումներ պետական բյուջե	51100
4	Կոմունալ վճարների ծախսեր	10500
5	Փոստային և կապի վճարների ծախսեր	3000
6	Գրասենյակային ծախսեր	5000
7	Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր	7700
8	Տրանսպորտային ծախսեր	7500
9	Ծառայությունների ձեռք բերման ծախսեր	950
10	Ներկայացուցչական ծախսեր	2000
11	Անդամավճարներ	

12	Մշակութային ծախսեր	1000
13	Վարձակալության ծախսեր	500
14	Կրթական բարեփոխումների անցկացման ծախսեր	850
15	Շրջանավարտների հետ տարվող աշխատանքների և կարիերայի զարգացման միջոցառումների ծախսեր	500
16	Հասարակության և լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքների ծախսեր	
17	Ուսանողական միջոցառումների ծախսեր	1000
18	Գործուղման ծախսեր	1400
19	Պրակտիկայի ծախսեր	1000
20	Գիտական և գիտատեխնիկական գործունեության շրջանակներում, պետական բյուջեից ստացված միջոցներից՝ «Այլ ծախսեր»-ի և ՊՈԱԿ-ների ֆինանսավորման ծախսեր	
21	Դրամաշնորհային ծրագրերով նախատեսված նպատակային ֆինանսավորման ծախսեր	
22	Գրադարանային ծախսեր	1000
23	Այլ ծախսեր	4600
Ոչ ընթացիկ ծախսեր		17800
այդ թվում՝		
24	Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր	12800
25	Հիմնանորոգման ծախսեր	5000
26	Շինարարական ծախսեր	

ՀԱՄԱՄԱՄՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**Կենտրոնի վարիչ՝ Խաչատրյան Տաթևիկ Վասիլի**

Համամասնաճյուղային համակարգչային կենտրոնն ունի 4 սրահ: Յուրաքանչյուր սրահ սպասարկում է մեկ ֆակուլտետի: Գործում է «ինտերնետ» կապ:

Մասնաճյուղի ուսումնական լաբորատորիաների թիվը՝ 8

Արվեստանոցների թիվը՝ 6

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

1. Մասնաճյուղի կենտրոնական մասնաշենքում հիմնարար վերանորոգվել և նոր գույքով կահավորվել են 4 նոր լսարաններ:
2. Նորացվել է ուսումնական գույքը. տեղադրվել են սեղան-նստարաններ, գրատախտակներ, տեխնիկական սարքավորումներ:
3. Վերանորոգման աշխատանքներ են կատարվել մասնաճյուղի ամբողջ տարածքում: Հիմնարար վերանորոգվել են մասնաճյուղի տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակները, ինչպես նաև ընդունարանը: Մասնակի վերանորոգվել է նաև մասնաճյուղի կենտրոնական մասնաշենքի բակը:
4. Նորացվել է հումանիտար և բնագիտական ֆակուլտետների համակարգչային սրահների և մի շարք ամբիոնների ու հաշվապահության համակարգչային տեխնիկան:
5. Մասնաճյուղի հյուրանոցային համալիրում կառուցվել է լրացուցիչ երկու հյուրասենյակ՝ 4 տեղով: Տարածքում կառուցվել է դասախոսների հանգստի նոր սենյակ: Վերակառուցվել է նաև հյուրանոցային համալիրի պարիսպը և մասնակի ասֆալտապատվել տարածքը:
6. Հիմնարար վերանորոգվել են մասնաճյուղի բնական գիտությունների և կիրառական արվեստի ֆակուլտետների տանիքները:
7. Մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի համար ստեղծվել են ցուցասրահ և 2 արվեստանոց:
8. Կենտրոնական մասնաշենքում կառուցվել է անցակետային սենյակ:

Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողներ

	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ մասնագիտություն	Կուրս	Կրթաթոշակի անվանումը
<i>Առաջին կիսամյակ</i>				
1.	Դարբինյան Լիանա Էդուարդի	հումանիտար գիտությունների «Պատմություն»	3-րդ	Մխիթար Գոշ
2.	Պողոսյան Վլադիմիր Արմենի	հումանիտար գիտությունների «Պատմություն»	2-րդ	Երևանի պետական համալսարան
3.	Հախվերդյան Աննա Համոյի	հումանիտար գիտությունների «Մանկավարժ. և հոգեբանություն	2-րդ	Ջեմմա Անանյան
4.	Սիմոնյան Աստղիկ Վահանի	հումանիտար գիտությունների «Անգլերեն լեզու»	3-րդ	Վազգեն Սարգսյան
5.	Չոբանյան Արաքս Համլետի	հումանիտար գիտությունների «Ֆրանսերեն լեզու»	3-րդ	Մոնթե Մելքոնյան
6.	Սարգսյան Գայանե Կամոյի	տնտեսագիտական «Սերվիս»	3-րդ	Վահան Թեքեյան
7.	Սիմոնյան Նարինե Կոմիտասի	բնագիտական «Անտառ. և անտառապուրակ. տնտես»	4-րդ	Լյուդվիգ Սայադյան
8.	Մելիքսեթյան Ռայիսա Վասիլի	բնագիտական «Մաթեմատիկա և ինֆորմատիկա»	4-րդ	Համլետ Կարայան
9.	Մելիքսեթյան Մանե Վրեժի	բնագիտական «Ֆիզիկա, ինֆորմատիկա»	3-րդ	Լավագոյն ուսանող
10.	Գուլակյան Տաթևիկ Լյովայի	կիրառական արվեստի «Կիրա. զարդ. և ժաղ. արհեստներ»	4-րդ	Սպարտակ Սարգսյան
<i>Երկրորդ կիսամյակ</i>				
11.	Նազինյան Սյուզաննա Նորիկի	բնագիտական «Կիր. մաթ. և ֆիզիկա»	2-րդ	Համլետ Կարայան
12.	Ղաթախչյան Նելլի Սերյոժայի	բնագիտական «Բնապահ. և բնօգտագործում»	3-րդ	Լյուդվիգ Սայադյան
13.	Օհանյան Հայկ Ռուբենի	տնտեսագիտական «Սերվիս»	3-րդ	Սահակ Չորափորեցի
14.	Աղասարյան Հասմիկ Էդիկի	տնտեսագիտական «Տնտեսագիտություն»	3-րդ	Շավարշ Մարգարյան
15.	Խեչյան Հասմիկ Արսենի	հումանիտար գիտությունների «Պատմություն»	3-րդ	Մխիթար Գոշ
16.	Պողոսյան Վլադիմիր Արմենի	հումանիտար գիտությունների «Պատմություն»	2-րդ	Վազգեն Սարգսյան
17.	Մելիքսեթյան Ռիմա Էդիկի	հումանիտար գիտությունների «Մանկ. և հոգեբանություն»	4-րդ	Մոնթե Մելքոնյան

**ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2009-10 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

2009-2010 ուսումնական տարվա ընթացքում ուսումնամեթոդական բաժինը իրականացրել է հետևյալ միջոցառումները.

- Ուսանողների և դասախոսների իրազեկության բարձրացման և համալսարանական կրթական ծրագրերի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով հաշվետու տարում վերահրատարակվել են կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք, որը պատրաստվել է նաև լազերային սկավառակի ձևով, բակալավրի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար: Առաջադրվելով Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան չափանիշներով, կարևորելով ուսանողների ինքնուրույն աշխատանքը՝ պակասեցվել է նրանց շաբաթական բեռնվածությունը, հստակեցվել է քննությունների քանակը:
- Կրեդիտային համակարգի ներդրման շրջանակներում իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ բակալավրի և հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերում: Մասնավորապես, գիտական խորհրդի նիստում քննարկվել և հաստատվել են հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը:

Ուսումնամեթոդական բաժնի աջակցությամբ բակալավրիատի հեռակա ուսուցմամբ ուսումնական պլանները ևս կազմվել են կրեդիտային համակարգին համապատասխան:

- Կրթության որակի բարելավման նպատակով շարունակվել են հետևողական աշխատանքները պրոֆեսորադասախոսական կազմի փաստաթղթերի ձևակերպման, նրանց կատարողականի վերահսկման, ուսումնական գործընթացի իրականացման, ուսանողների և դասախոսների բացակայությունների գրանցման և ամփոփման ուղղություններով:

- Հաշվետու ժամանակահատվածում մասնակի փոփոխության է ենթարկվել ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը՝ առաջադիմության նկատմամբ առավել խիստ պահանջներով:

Ինչպես նախորդ տարում, ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին շարունակվել է ուսանողական նպաստների հատկացումը: 2009-10 ուս.տարվա առաջադիմության արդյունքներով՝ նպաստ է տրվել 310 ուսանողների, որից 109-ը՝ 1-ին կուրսում, 100-ը՝ 2-րդում, 101-ը՝ 3-րդում: Համակարգի փոփոխման են ենթարկվել 1-ին կուրսում 29 ուսանող (26,6 %), 2-րդ կուրսում՝ 11 ուսանող (11%), իսկ 3-րդում՝ 9 ուսանող (8.9%): Բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած 241 ուսանողների հատկացվել է նաև կրթաթոշակ: Բացի պետական կրթաթոշակից, հատկացվել են ԵՊՀ ԻՄ-ի և Պաշտպանության նախարարության կողմից սահմանված կրթաթոշակներ:

2009-10 ուստարում 7 ուսանողներ արժանացել են նմանատիպ այլ կրթաթոշակների:

ՀՀ < Կրթության մասին > օրենքի համաձայն՝ բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներին տրվել են ուսման վարձի զեղչեր: Այդ զեղչերից օգտվել են 98 ուսանողներ, որոնցից 2-ը՝ աշխատակիցների երեխաներ: Կիրառված զեղչերի գումարը կազմում է մոտավորապես 7 847 000 դրամ:

Զեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական բաժնի կողմից իրականացվել են առաջադիմության վերահսկման աշխատանքներ՝ հետևյալ ընթացակարգով. ուստարվա 1-ին կիսամյակից սկսած՝ ֆակուլտետները բոլոր տեղեկագրերի տվյալները մուտքագրել են համակարգչային բազա՝ սքանավորման եղանակով, որը մշակվել է ՏՏԿՀ կենտրոնի կողմից և վերահսկվել ուսումնամեթոդական բաժնի կողմից: ՏՏԿՀ կենտրոնի կողմից քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ֆակուլտետների ղեկանատների աշխատակիցների հետ շարունակվել են ուսուցողական աշխատանքներ համակարգչային ծրագրից հմտորեն օգտվելու համար: Տվյալների մշակումն ու վերահսկումը կազմակերպվել են ուսումնամեթոդական բաժնում գործող ներքին ցանցի միջոցով:

- Ուսումնամեթոդական բաժնի կողմից ամփոփվել, այնուհետև ԵՊՀ են ներկայացվել պետական քննական հանձնաժողովի նախագահների հաշվետվությունները:

2009-10 ուստարում պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 277 բակալավրական կրթության դիպլոմ:

- Շարունակվել են կազմակերպչական աշխատանքները հեռակա ուսուցմամբ ընդունելության ուղղությամբ 6 մասնագիտությունների գծով:

- Ընթացիկ տարում հաշվարկվել և վերահսկվել է ուսանողական շարժը: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերահսկման, հիվանդությունների պատճառով տարկետման հրամաններ և ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ ԿԳՆ է ներկայացվել 3-ԳՄ ձևի վիճակագրական հաշվետվությունը, որը ներառում է քննությունների արդյունքները և շրջանավարտների վերաբերյալ այլ տվյալներ:

- Պրակտիկաները դիտելով որպես ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրատարր՝ այս ուսումնական տարում ևս, համաձայն հաստատված ուսումնական պլանների և համապատասխան հաստատությունների, հիմնարկների հետ կնքված պայմանագրերի, կազմակերպվել են ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաներ: Պրակտիկաներին նախորդել են անցկացման նախապատրաստական աշխատանքները: Այս գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով ֆակուլտետներում կազմակերպվել են ժողովներ, խորհրդակցություններ և սեմինարներ պրակտիկայի ղեկավարների անմիջական մասնակցությամբ:

- Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա է անցել 323 ուսանող, ուսումնական պրակտիկա՝ 257 ուսանող, որից 123-ը՝ դաշտային:

ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

N	Մասնագիտություն	Կուրս	Պրակտիկայի անվանումը	Տևողութ. շաբօնորով	Անցկացման վայրը
I	II	III	IV	V	VI
1.	Բնական գիտություններ ֆակուլտետ				
	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	III	արտադրական (մանկավարժական)	4	Տավուշի մարզի դպրոցներ
2.	Տնտեսագիտության ֆակուլտետ				
	Տնտեսագիտության տեսություն	II	ուսումնական (հաշվողական)	2	ԵՊՀ ԻՄ
	Տնտեսագիտություն	III	արտադրական (մասնագիտական)	4	Իջևանի քաղաքապետարան, գրադավածության տարածք.կենտրոն, ՃՀՀ, ԱՇԻԲ, Պետ.եկամուտ. տարածք.հարկ.տեսչություն , Քարարտ, Վիճ.ծառ.մարզ. գործակալություն
	Սերվիս	I	ուսումնական (ճանաչողական)	2	Ծանոթություն գրոսաշրջային երթուղիների հետ, այցելութ. մարզի պատմա-մշակութային հուշարձաններ
		II	ուսումնական (ճանաչողական)	2	Ծանոթություն սերվիսի ոլորտի ձեռնարկություններին
		III	արտադրական (մասնագիտական)	4	Իջևանի տուրիզմի և բիզնեսի տեղեկատվական կենտրոն
3.	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ				
	Պատմություն	II	ուսումնական (հնագիտա-ազգագրական, թանգարանային)	2	ՀՀ հուշարձաններ, թանգարաններ
		III	արտադրական (մանկավարժական)	4	Տավուշի մարզի դպրոցներ
	Հայոց լեզու և	III			

Հայոց լեզու և

	գրականություն		)		
	Ֆրանսերեն լեզու				
	Անգլերեն լեզու				
	Մանկավարժություն և հոգեբանություն	III			
		IV	արտադրական (փորձ.տվյալների մշակում և ներկայացում)	3	ԵՊՀ ԻՄ, Իջևանի դպրոցներ, մանկապարտեզ, ոստիկանության բաժ., հիվանդանոց
4.	Կիրառական արվեստի ֆակուլտետ				
	Կիրառական արվեստ	I	ուսումնական (բնության ձևերի ուսումնասիրում)	2	Իջևանի անտառտնտ., դենդրոպարկ
		II	ուսումնական	2	Իջևանի անտառտնտ., դենդրոպարկ
	Դեկորատիվ- կիրառական արվեստ և ժող. արհեստներ	III	ուսումնական (արվեստի գործերի ուսումնասիրում)	2	ՀՀ թանգարաններ, հուշարձաններ
		IV	արտադրական (նախագծային ուսուցում)	4	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ

ԳՐԱԴԱՐԱՆ**Վարիչ՝ Առուստամյան Ալվինա Վաղարշակի**

Գրադարանի բաժինների կատարած ընդհանուր ուղղությունները
Աշխատանքային ցուցանիշները

Բաժին՝ - 4	Գրքային ունեցվածքը՝ - 9390
Ընթերցասրահ՝ - 1	Ընթերցող՝ - 1249
Աշխատողների թիվը՝ - 5	Գրքատածք՝ - 7500

Համալրման և մշակման բաժին

Հաշվետու շրջանում իրականացվել է ֆոնդերի համալրում՝ ելնելով ուսումնական ծրագրերի պահանջներից: Համալրումն ընթացել է հետևյալ աշխատափուլերով՝

- գրականության ընդունում
- հաշվառում- բաշխում

Հաշվետու տարում գրքային ֆոնդ է մուտքագրվել 1157 միավոր գիրք, 40 ամսագիր և թերթերի հավաքածու:

Գրականության ընտրության ժամանակ հաշվի են առնվել ընթերցողների պահանջները և ամբիոնների մասնագետների կարծիքները: Գրականության համալրումը կատարվել է հիմնականում տնօրենության կողմից հատկացված գումարային ֆոնդից և նվիրատվություններից: Գրադարանային աշխատափուլերի ավանդական ձևերին /համալրում, մշակում, պահեստավորում և սպասարկում/ զուգընթաց՝ կիրառվել է նաև էլեկտրոնային գրադարանի ստեղծման գործընթացը և անընդհատ համալրվել և համալրվում է լազերային սկավառակների՝ CD-ROM ֆոնդը:

Այս գործընթացը կարելի է գնահատել որպես դրական տեղաշարժ արդիականացման ուղղությամբ:

Հաշվետու տարում կատարվել է 1249 ընթերցողների գրանցում, այդ թվում նաև հեռակա ուսուցման 312 ուսանողներ և 104 աշխատողներ: Բաժինն ունի գիտական , ինչպես նաև գեղարվեստական գրականության ֆոնդեր: Ամենօրյա աշխատանք է տարվել պարտք ունեցող ուսանողների հետ:

Գրապահոց

Նոր գրքերի դարակավորմանը զուգընթաց կատարվել են գրականության տեղափոխման աշխատանքներ: Տնօրենության աջակցությամբ ձեռք են բերվել նոր գրադարակներ, կատարվել են վերադասավորման աշխատանքներ: Պարբերաբար ավելացվել է ֆոնդի գրականության քանակը:

Գրականության սպասարկման բաժին

Կատարվել է ֆոնդերի գտում և համալրում գիտական նոր և պահանջարկ ունեցող գրականությամբ:

Վերանայվել և կարգի են բերվել քարտարանները:

Գրականության սպասարկումը կատարվել է պահանջագրերով, ինչպես նաև ինքնասպասարկման սկզբունքով:

ԵՊՀ ԻՄ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**Նախագահ՝ Մարգարյան Ալեքսան Շամիլի**

Հաշվետու տարում ԵՊՀ ԻՄ արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրներն առավել արդյունավետ լուծելու նպատակով համալսարանի աշխատողների և ուսանողների համար շարունակել է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածությամբ միջոցառումները: ԵՊՀ ԻՄ արհկոմիտեն գործել է <<ՀՀ աշխատանքային օրենսգրքի>>, <<ՀՀ արհեստակցական կազմակերպությունների մասին օրենքի>>, <<ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կանոնադրության>>, <<ԵՊՀ ԻՄ արհեստակցական կազմակերպության կանոնադրության>>, << ԵՊՀ ԻՄ կոլեկտիվ պայմանագրի>> շրջանակներում:

Հաշվետու տարում ԵՊՀ ԻՄ արհկոմիտեի նախագահի նախաձեռնությամբ ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման համար անցկացվող մրցույթների կազմակերպման գործընթացն առավել թափանցիկ դարձնելու նպատակով, ինչպես նաև աշխատողների իրավունքների և օրինական շահերի հնարավոր խախտումները բացառելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով ֆակուլտետների մրցութային հանձնաժողովներում ընդգրկվել են նաև ֆակուլտետների արհբյուրոների նախագահները:

Հաշվետու տարում ԵՊՀ ԻՄ արհկոմիտեն ամանորյա միջոցառումներ է կազմակերպել ու իրականացրել աշխատողների և ուսանողների թվով 42 երեխաների և թոռնիկների համար՝ հատկացնելով ամանորյա նվերներ: Իրականացվել է նաև կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին նվիրված համահամալսարանական միջոցառում 131 կին աշխատակիցների համար: Ամանորյա միջոցառումների համար ծախսվել է 900.000 դրամ:

Նշված ժամանակահատվածում ձեռք է բերվել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացվել թատերական տարբեր ներկայացումների 230 տոմս:

Հաշվետու տարում ԵՊՀ ԻՄ արհկոմիտեն կազմակերպել է համալսարանի աշխատակիցների և ուսանողների հանգիստը ԵՊՀ-ի Ծաղկաձորի և Դիլիջանի ուսումնաարտադրական բազաներում: Ուսումնաարտադրական բազաների ծանրաբեռնվածությունը հուլիս-օգոստոս ամիսներին կազմել է իրական հնարավորության 30 տոկոսը, ինչը բազաների ոչ բավարար սանիտարական, նյութատեխնիկական վիճակի հետևանք է:

Սոցիալապես առավել անապահով աշխատակիցներին հատկացվել է ճանապարհային և առաջին բժշկական օգնության ծախսերի փոխհատուցում: Այդ նպատակով 22 աշխատակիցների և ուսանողների համար ծախսվել է հարյուր հինգ հազար դրամ:

Դիլիջանի մարզաառողջարանային ճամբարն այս ուսումնական տարվա ընթացքում ոչ բավարար սանիտարական, նյութատեխնիկական վիճակի հետևանքով մասամբ շահագործվել է միայն հուլիս- օգոստոս ամիսներին:

Արհկոմիտեին և <<Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնին>> կից գործում է երկրագիտական ուսանողական-տուրիստական ակումբ, որը գլխավորում է պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Սիմոն Հմայակյանը: Ակումբն իր վրա է վերցրել ԵՊՀ ԻՄ ուսանողության հայրենագիտական, ճանաչողական և ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները: Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 215 ուսանողների համար կազմակերպվել և հաջողությամբ իրականացվել է թվով 8 արշավ՝ դեպի Տավուշի, Լոռու և Կոտայքի մարզերի պատմամշակութային և վանական համալիրներ: Արշավների ընթացքում ուսանողները ծանոթացել են մեր հայրենիքի պատմամշակութային արժեքների ժամանակագրությանը, հայրենապահպանության գործում նրանց ունեցած դերին և երիտասարդական այլ կազմակերպությունների հետ սանիտարական մաքրում իրականացրել նշված տարածքներում: Արշավները կրում են շարունակական բնույթ. ԵՊՀ ԻՄ արհկոմիտեն դրանք գնահատում է որպես ռազմահայրենասիրական դաստիարակությանը և հայրենագիտությանը նպաստող լավագույն միջոց:

Հաշվետու տարում ԵՊՀ - 90 և ԵՊՀ ԻՄ- 15-ամյակներին նվիրված միջոցառումների շրջանակներում, ԵՊՀ ԻՄ արհկոմիտեն <<Ֆիզիկական դաստիարակության և սպորտի>> ամբիոնի հետ կազմակերպել է վոլեյբոլի, բասկետբոլի, ձեռքի ուժի, սեղանի թենիսի և մինի ֆուտբոլի համահամալսարանական առաջնություններ, որոնց մասնակցել են նաև ԵՊՀ ԻՄ դասախոսները: ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետում ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի հետ համատեղ կազմակերպվել է դասախոսների, աշխատակիցների և ուսանողների՝ <<Շնորհավոր ծնունդդ, համալսարան>> խորագրով նկարների ու ձեռքի աշխատանքների ցուցահանդես:

Հաշվետու տարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը ԵՊՀ արհեստակցական կազմակերպության հետ, որն արտահայտվել է համատեղ միջոցառումների տեսքով. ԵՊՀ 90-ամյակ, ԵՊՀ ԻՄ 15-ամյակ, Ամանոր, Սեպտեմբերի 1, Մարտի 8:

2010թ. Սեպտեմբերի 1-ին ԵՊՀ ԻՄ ընդհանուր ժողովում հաստատվել է ԵՊՀ ԻՄ-ի արհկոմիտեի նոր կազմը.

1. Մարգարյան Ալեքսան – Արհկոմիտեի նախագահ
2. Ասիլյան Ռուզան - ԵՊՀ ԻՄ ուսանողների արհբյուրոյի նախագահ
3. Հովսեփյան Մհեր- Բնագիտական ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
4. Դիլբարյան Անդրանիկ- Կիրառական արվեստի ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
5. Թումանյան Լուսինե- Հումանիտար գիտությունների ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
6. Սարիբեկյան Անուշ- Տնտեսագիտական ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Ալբերտ Սարգսի Հովհաննիսյան

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնը ստեղծվել է 2009թ. դեկտեմբերի 28-ին, որի գործունեության հիմնական նպատակն է նպաստել աշխատանքային շուկայում մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների առավել մրցունակ դառնալուն, ամրապնդել շրջանավարտների և մասնաճյուղի միջև մշտական կապն ու համագործակցությունը:

Կենտրոնի հիմնական նպատակն է օգնել մասնաճյուղի շրջանավարտներին և ուսանողներին՝ ճիշտ կողմնորոշվել աշխատաշուկայում, արձագանքել վերջինիս մարտահրավերներին և բարձր մակարդակով ներկայանալ գործատուին: Այդ նպատակով կենտրոնը բազմաթիվ տեղական կազմակերպությունների և գործատուների հետ ստեղծել է աշխատանքային կապ:

Մասնաճյուղի կենտրոնը համագործակցում է ԵՊՀ-ի՝ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի հետ, պարբերաբար կատարում տեղեկատվությունների և գործառնությունների առաջավոր փորձի փոխանակում: 2009-2010թթ. ուս. տարում մասնաճյուղում սկիզբ դրված գործընթացը շարունակական է և գործնական բարձր հիմքերի վրա է:

Մասնաճյուղի՝ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը համագործակցում է մարզի տարբեր գործատուների հետ:

Համալսարան-այժմ արդեն ավագ դպրոց կապը ամրապնդելու նպատակով կենտրոնը համագործակցում է մագպետարանի կրթության վարչության հետ: Նախաձեռնության նպատակն է մարզի կրթական հաստատությունները ապահովել բարձրակարգ մասնագետներով:

Մասնաճյուղի՝ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը 2009-2010թթ. ուսումնական տարվա շրջանավարտներին ավարտական քննություններից հետո բաժանել է շրջանավարտի գրանցման թերթիկներ, որի նպատակն է շրջանավարտներին պարբերաբար տեղյակ պահել թափուր աշխատատեղերի, վերապատրաստման դասընթացների, կրթական և այլ ծրագրերի մասին, միաժամանակ առաջարկվել գրանցման թերթիկում օբյեկտիվորեն ներկայացնել իրենց կարծիքներն ու առաջարկները մասնաճյուղի ուսումնական և այլ գործընթացների վերաբերյալ: Կենտրոնի ստեղծումը արդիաշունչ է, գործընթացը՝ փոխշահավետ և՛ գործատուների, և՛ շրջանավարտների համար:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Թամրազյան Թաթուլ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդը իրականացրել է կանոնադրությունից բխող իր բոլոր գործառնությունները, այսինքն պաշտոնապես ուսանողների շահերը, օգնել սոցիալապես անապահով ուսանողներին, ներդրում ունեցել համալսարանների հայերենասիրական ոգու բարձրացման գործում, նպաստել ուսանողների իրավական գիտակցության բարձրացմանը:

2009-2010 ուստարվա ընթացքում ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդը կազմակերպել է միջոցառումներ՝

1. Նվիրված գիտելիքի օրվան: Համերգային ծրագիր. Առաջին կուրսի ուսանողների երդման արարողություն (01.09.09)
2. Համերգային ծրագիր՝ նվիրված Ուսանողի միջազգային օրվան (17.11.09)
3. ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհրդի կողմից կազմվել են հանձնաժողովներ՝ աչալուրջ կերպով հետևելու ԵՊՀ ԻՄ-ում կիսամյակային քննություններին (2009թ. դեկտեմբեր)
4. ԵՊՀ ԻՄ ՈՒԽ-ն տոնական միջոցառումների շարք է անցկացրել մարզի 2 համայնքներում՝ Գանձաքար և Այգեհովիտ, որտեղ մեծ թիվ էին կազմում հաշմանդամ և անապահով ընտանիքների երեխաները: Նրանց համար կազմակերպվել է տիկնիկային ներկայացում, նկարչության մրցույթ, երգ, պար, ասմունք, իսկ վերջում բոլոր երեխաներին հանձնվել են նվերներ (16.12.09)
5. Ամանորյա դիմակահանդես ԵՊՀ ԻՄ ուսանողության համար (29.12.09)
6. Միջոցառում՝ նվիրված ՀՀ ազգային բանակի կազմավորմանը: Միջոցառմանը հրավիրվել էին արցախյան շարժման վետերաններ, երկրապահ կամավորականներ և զինվորականներ (28.01.10)
7. ԵՊՀ ԻՄ ՈՒԽ նախագահ Թաթուլ Թամրազյանը և ՈՒԽ քարտուղար Նաիրի Ճաղարյանը մասնակցել են Տավուշի մարզպետարանի և Իջևանի ՇՊԱԿ-ի միջև հուշագրի ստորագրման արարողությանը (28.01.10)
8. Համերգային ծրագիր՝ նվիրված Կանանց միջազգային օրվան: Պատվավոր հյուրերի շարքում էին ՀՀ ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյանը, Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը և Գուգարաց թեմի առաջնորդ Հայր Սասունը (08.03.10)
9. ԵՊՀ ԻՄ –ի ուսանողները, համագործակցելով ՇՊԱԿ-ի հետ, կազմակերպել են հակակոռուպցիոն ակցիա: Միջոցառումները լուսաբանվել էր <<Հրապարակ>>, <<Տավուշ>> և <<Արմենպրես>> թերթերում (05.05.10)
10. Երբ՝ նվիրված Մեր Եղեռնի զոհերի հիշատակին (24.04.10)

11. Համերգային ծրագիր՝ նվիրված Արցախյան գոյամարտի և Հայրենական պատերազմի հաղթանակին (09.05.10)
12. ԵՊՀ ԻՄ ՈԻԽ-ը, համագործակցելով ՀԵԻԱ Իջևանյան ՇՊԱԿ-ի հետ, իրականացրեց ծրագիր, որի նպատակն էր բնակչությանը իրազեկել իրենց իրավունքների մասին (12.05.10)
13. ՈԻԽ նախագահության նիստի որոշմամբ ստեղծվել է հանձնաժողով՝ ԵՊՀ ԻՄ-ում անցկացվող տարեվերջյան քննությունները վերահսկելու նպատակով (2010 մայիս):

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ընկերության նախագահ՝ Սահակյան Նաիրի Արարատի

Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է կանոնադրային պահանջներից բխող գործառնություններ ու քայլեր, սատարել է գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնություններին, նպաստել ուսանողական գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը և ուսանողական առօրյայի կազմակերպմանը:

2009 թվականի նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ ՈՒԳԸ նախագահի ընտրություն, և ձայների պարզ մեծամասնությամբ ՈՒԳԸ նախագահ ընտրվեց Նաիրի Արարատի Սահակյանը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են գիտահանրամատչելի դասախոսություններ, զեկուցումներ, բանավեճեր, քննարկումներ, գիտաժողով և մամնատիպ ավելի քան 40 միջոցառումներ, այդ թվում՝

1. Գիտահանրամատչելի դասախոսություն՝ «Օգոնի շերտ» թեմայով (18.09.2009) ,
2. Գիտահանրամատչելի դասախոսություն՝ «Նոր դարաշրջան՝ ազդարարված մեկ իրադարձությամբ» թեմայով՝ նվիրված տիեզերագնացությանը (5.10.2009) ,
3. Վիկտոր Համբարձումյանին նվիրված գիտահանրամատչելի դասախոսություն: (3.11.2009) ,
4. Քննարկում՝ «Հոգեբանական տեսակետներ» թեմայով (փետրվար 2010),
5. Գիտահանրամատչելի դասախոսություն՝ «Պետական պարտքեր» թեմայով (մարտ 2010) ,
6. Սեմինար՝ «Հեղուկների և գազերի շարժումը» թեմայով (մարտ 2010) :
7. Քննարկում՝ «Ինչ է զգացմունքը» թեմայով (մարտ 2010) ,
8. Սեմինար ու նկարների և զարդաքանդակների ցուցահանդես՝ նվիրված Վարդգես Սուրենյանցի 150-ամյակին (մարտ 2010) ,
9. Բանավեճ՝ տնտեսագիտական թեմաներով (ապրիլ 2010) ,
10. Գիտահանրամատչելի դասախոսություն՝ «Զբոսաշրջություն» թեմայով (ապրիլ 2010) ,
11. Սեմինար «Հարթաչափության թեորեմներ» թեմայով (ապրիլ 2010) ,
12. Ինտելեկտուալ խաղի գարնանային փուլ (ապրիլ 2010) ,

13. Մեծ Եղեռնի 95-րդ տարելիցին նվիրված գիտաժողով (22.04.2010) ,

14. Մեծ Եղեռնի 95-րդ տարելիցին նվիրված ասմունքի ցերեկույթ (23.04.2010) ,

15. Մեծ Եղեռնի 95-րդ տարելիցին նվիրված գրական-երաժշտական միջոցառում (27.04.2010) ,

16. Մաթեմատիկոս Լեոնարդ Էյլերին նվիրված գիտահանրամատչելի դասախոսություն (մայիս 2010) և այլն :

Ինչպես նաև լույս է ընծայվել ավելի քան 25 պատի թերթ :

Ապրիլի 22-ին տեղի ունեցած գիտաժողովի ժամանակ ուսանողները իրենց զեկուցումներում մանրամասնորեն ներկայացրին 1915 թվականի արյունալի իրադարձությունները, դրա պատճառները, հետևանքները, հոգեբանական ազդեցությունը հետագա սերունդների վրա և մեծ տերությունների վերաբերմունքը այս հարցի նկատմամբ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈՒԳ-Ը-ն համագործակցում է մայր բուհի ՈՒԳ-Ը-ի հետ: մասնաճյուղի 2 ուսանողների՝ վերոհիշյալ թեմաներով զեկուցումները ուղարկվել են մայր բուհ և տպագրվել ԵՊՀ ՈՒԳ-Ը-ի հրատարակած թեզիսների ժողովածուում:

ՈՒԳ-Ը նախագահության կազմը

1. Նսիրի Սահակյան, նախագահ
2. Սլավիկ Ալավերդյան, փոխնագահ
3. Վլադիմիր Պողոսյան, քարտուղար

Ֆակուլտետների ՈՒԳ-Ը նախագահներ

1. Միկիչ Փարսադանյան, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ
2. Հայկ Օհանյան, Տնտեսագիտության ֆակուլտետ
3. Դավիթ Աղասարյան, Բնական գիտությունների ֆակուլտետ
4. Տիգրան Մանվելյան, Կիրառական արվեստի ֆակուլտետ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկանի պաշտոնակատար՝ Յուզուլյան Արտակ Վոլոդյայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ

2009-10թթ. ուսումնական տարվա ընթացքում բնագիտական ֆակուլտետը իրականացրել է հետևյալ միջոցառումները.

- Ուսանողների և դասախոսների իրազեկության բարձրացման և համալսարանական կրթական ծրագրերի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով հաշվետու տարում ուսումնամեթոդական բաժնի հետ համատեղ վերահրատարակվել են կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք, որը բակալավրի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար պատրաստվել է մաս լազերային սկավառակի ձևով:
- Կրթության որակի բարելավման նպատակով շարունակվել են հետևողական աշխատանքները կատարողականի վերահսկման, ուսումնական գործընթացի իրականացման, ուսանողների և դասախոսների բացակայությունների գրանցման և ամփոփման առումով:
- Ինչպես և նախորդ տարում, ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին շարունակվել է ուսանողական նպաստների հատկացումը: 2009-10թթ. ուս. տարվա առաջադիմության արդյունքներով նպաստ է տրվել 109 ուսանողի, որից 42-ը՝ II կուրսում, 41-ը՝ III-ում, 44-ը՝ IV-ում: Համակարգի փոփոխման են ենթարկվել II կուրսում՝ 5 ուսանող, III կուրսում՝ 1 ուսանող, իսկ IV կուրսում՝ 1 ուսանող: Բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած 124 ուսանողների հատկացվել է մաս կրթաթոշակ: Բացի պետական կրթաթոշակից՝ հատկացվել են ԵՊՀ ԻՄ-ի կողմից սահմանված անվանական կրթաթոշակներ:

ՀՀ «Կրթության մասին» օրենքի համաձայն՝ զեղչվել է վճարովի համակարգում սովորող մի խումբ ուսանողների ուսման վարձը: Այդ զեղչերից օգտվել են 21 ուսանողներ: Ձեռչերի և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական բաժնի հետ համատեղ իրականացվել են առաջադիմության վերահսկման աշխատանքներ՝ հետևյալ ընթացակարգով. ուս. տարվա I կիսամյակից սկսած՝ ֆակուլտետի բոլոր տեղեկագրերի տվյալները մուտքագրվել են համակարգչային բազա՝ սքանավորման

եղանակով, որը մշակվել է ՏՏԿՀ կենտրոնի կողմից, և վերահսկվել ուսումնամեթոդական բաժնի կողմից: ՏՏԿՀ կենտրոնի կողմից քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ֆակուլտետի ղեկնաատի հետ շարունակվել են ուսուցողական աշխատանքները համակարգչային ծրագրից հմտորեն օգտվելու համար: Տվյալների մշակումն ու վերահսկումը կազմակերպվել են ուսումնամեթոդական բաժնում գործող ներքին ցանցի միջոցով:

- Ֆակուլտետի կողմից ամփոփվել, այնուհետև ուսումնամեթոդական բաժին են ներկայացվել պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2009-10 թթ. ուս. տարում ֆակուլտետն ավարտել է 53 ուսանող, որից 6-ը՝ գերազանցության դիպլոմով:

- Ուսումնամեթոդական բաժին է ներկայացվել 3-ԳՄ ձևի վիճակագրական հաշվետվությունը, որը ներառում է քննությունների արդյունքները և շրջանավարտների վերաբերյալ այլ տվյալներ:
- Արտադրական և մանկավարժական պրակտիկաները դիտելով որպես ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրատարր՝ այս ուսումնական տարում ևս, համաձայն հաստատված ուսումնական պլանների և հաստատությունների, հիմնարկների հետ կնքված պայմանագրերի, դրանք անցկացվել են բարձր կազմակերպվածությամբ՝ շնորհիվ նախապատրաստական այն աշխատանքների /ժողովներ, խորհրդակցություններ և սեմինարներ/, որ կազմակերպվել էին՝ պրակտիկայի ղեկավարների անմիջական մասնակցությամբ:
- Արտադրական (մանկավարժական) պրակտիկա է անցել 61 ուսանող, իսկ ուսումնական պրակտիկա՝ 27 ուսանող:
- Հաշվետու տարում ֆակուլտետի ամբիոնների կողմից անց են կացվել գիտական զեկուցումներ:
- Հաշվետու տարում ֆակուլտետում բացվել է բջջաբանության և ֆիզիոլոգիայի լաբորատորիա:
- Հաշվետու տարում Ընդհանուր ֆիզիկայի ամբիոնին պատկանող լաբորատորիաներին ԵՊՀ կողմից տրամադրվել են անհրաժեշտ սարքավորումներ, որի արդյունքում ավելացել է իրականացվող լաբորատոր փորձերի քանակը:

Ֆակուլտետի մասնագիտությունները

Շիֆր	Մասնագիտություններ՝
010500	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա
020800	Բնապահպանություն և բնօգտագործում

Կրթական աստիճան, մասնագիտություն	Ուսանողների թիվը՝ 198							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պալ	վճ.	պալ	վճ.	պալ	վճ.	պալ	վճ.
Բակալավրիատ								
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	15	8	14	12	15	24	-	-
Մաթեմ.ինֆորմ., ֆիզիկա *	-	-	-	-	-	-	15	16
Բնապահպանություն և բնօգտագործում	6	3	7	19	7	15	-	-
Անտառաշին և անտառապուր. տնտեսություն*	-	-	-	-	-	-	7	15
Ընդամենը	21	11	21	31	22	39	22	31

Քննաշրջանների արդյունքներ
Չմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկն երի թիվը	Առաջադիմու- թյան %-ը
		պա	վճարով ի		
Բակալավրիատ					
<i>Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա</i>					
1-ին	23	1	3	3	87
2-րդ	26	-	23	1	77
3-րդ	39	1	12	2	54
<i>Մաթեմ.ինֆորմ.,ֆիզիկա *</i>					
4-րդ	31	3	14	4	55
<i>Բնապահպանություն և բնօգտագործում</i>					
1-ին	9	3	11	-	67
2-րդ	28	1	16	1	50
3-րդ	23	2	14	1	35
<i>Անտառային և անտառապուր. տնտեսություն*</i>					
4-րդ	22	3	11	3	67
Ընդամենը	201	14	104	15	41

- Այս մասնագիտության գծով 2007թ.-ից ընդունելություն չի կատարվել:

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջան ին մասնակցել են	Անրավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկնե րի թիվը	Առաջադիքու - թյան %-ը
		պալ	վճ		
Բակալավրիատ					
<i>Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա</i>					
1-ին	23	3	7	3	57
2-րդ	26	2	4	2	77
3-րդ	39	4	19	4	41
<i>Բնապահպանություն և բնօգտագործում</i>					
1-ին	9	2	-	-	78
2-րդ	27	1	14	2	44
3-րդ	22	1	11	1	46
Ընդամենը	146	13	55	12	53

Շրջանավարտներ

Մասնագիտություն	Ընդամենը՝ 53, այդ թվում նախորդ տարիներից՝ 0
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)
<i>Մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա</i> *	31 (4)
<i>Անտառ. և անտառապուր. տնտեսություն</i> *	22 (4)
Ընդամենը	53 (8)

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 3

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Զաքարյան Մանվել Աշոտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Յուցուլյան Արտակ Վոլոդյայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Հովսեփյան Միքեր Հովհաննեսի, ասիստենտ
3. Ճաղարյան Մարիետա Ալբերտի, դասախոս
4. Խաչատրյան Տաթևիկ Վասիլի, դասախոս
5. Խաչատրյան Արփինե Մանվելի, դասախոս
6. Օթարյան Քնար Վլադիմիրի, դասախոս
7. Սիմոնյան Աննա Սմբատի, դասախոս

Համատեղողներ

1. Գալումյան Աշոտ Գրիգորի - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Խաչոյան Լուսիկ Օնիկ - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Նավոյան Վարազդատ Խաժակի - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Քամալյան Ռաֆայել Ռուբենի - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ղազարյան Սերժիկ Սպարտակի - ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Թելունց Հերմինե Կորյունի - ամբիոնի լաբորանտ

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումներ թեմիս
-	-	-	-	2	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. **Միմոնյան Ա. Ս.** – համահեղինակներ- Սիմոնյան Ս. Հ., Ավետիսյան Ա. Գ., Ավինյան Վ. Ռ. – «Պարամետրական մատրիցների ընդհանրացված հակադարձների որոշման մի մեթոդի մասին, «ՀՃԱ ԼՐԱԲԵՐ 2009 հատոր 6, N 2», էջ 8
2. **Симонян А. С.** –Аветисян А. Г., Авинян В. Р.. – “Симплекс метод. Определения обратных параметрических матриц, основанный на дифференциальных преобразованиях”. Вестник государственного инженерного университета Армении, Серия моделирование оптимизация, управление,-Выпуск 13 том 1, Ереван 2010

Ձեկուցումների թեզիս

1. **Դավթյան Ն. Ն.** - համահեղինակ- Քամալյան Ռ. Ռ., «О границах экстремумов числа вершин с интервальным спектром во множестве правильных реберных t-цветных раскрасок „лестниц Мебиуса” при варьировании t, Годичная научная конференция РАУ, сб. науч. статей, Ереван, 2009г. см.4.

Ամբիոնում կատարված ալ աշխատանքների մասին

1. Ծրագրամեթոդական աշխատանքներ, որոնց ընթացքում նոր ուսումնական պլաններին համապատասխան կազմվել և լրամշակվել են ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների ուսումնական ծրագրերը և հրատարակվել:
2. Ամբիոնը մասնակցել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հիմնադրման 15-ամյա հոբելյանական տարելիցին նվիրված գիտաժողովներին: Ամբիոնի դասախոսների և ֆակուլտետի ուսանողների կողմից ներկայացվել են գիտամեթոդական զեկույցներ, անցկացվել քննարկումներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Աթոյան Սիեր Սերգեյի, ֆիզմաթ. գիտ.թեկն. դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Մակարյան Անուշավան Հայկարամի- ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մարգարյան Ալեքսան Շամիլի - ասիստենտ
3. Գուլակյան Գեղամ Վոլոդյայի - դասախոս

Համատեղողներ

1. Հարությունյան Նորայր Պատվականի - ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Բաղդասարյան Դավիթ Հակոբի - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Մակարյան Արմեն Հովհաննեսի - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Արզումանյան Հենրիկ Ավետիքի - դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Գուլակյան Գեղամ Վոլոդյայի – լաբորատորիայի վարիչ
2. Մովսիսյան Հասմիկ Սուրենի - լաբորանտ
3. Ալավերդյան Անահիտ Համլետի – լաբորանտ
4. Մադաթյան Ծովինար Ռաֆիկի – լաբորանտ

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հազվագյուտ հողային մետաղների հիման վրա սինթեզված մագնետիկներում մագնիսակալորիական երևույթի հետազոտումները: (Պետական ֆինանսավորում)	Հարությունյան Ն. Պ.

**Ըստ ընդհանուր ուղղությունների ամբիոնում կատարված
գիտական աշխատանքների ամփոփում**

Թեմա 1. Թեմայի ուղղությամբ հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Ինդուկցիոն վառարանում սինթեզվել են տեխնիկայում և գիտության մեջ մեծ կիրառություն գտած գադոլինիում պարունակող տարբեր բաղադրությամբ համաձուլվածքներ (Gd5(SixGel-x) 4):

2. Դրոն-2 դիֆրակտոմետրի վրա կատարվել են սինթեզված մնուլների ռենտգենոկառուցվածքային ուսումնասիրություններ, որոնք ցույց են տվել, որ մնուլների բյուրեղային ցանցն ունի մոնոկլինային կառուցվածք:

3. Չափվել են համաձուլվածքների մագնիսական ընկալունակությունները զրոյական և 3.5 կերատեղ մագնիսական դաշտում 78-350Կ ջերմաստիճանների տիրույթում: Ընկալունակության ջերմաստիճանային կախվածությունից որոշվել են մնուլների Կյուրիի ջերմաստիճանները:

4. Ստուգված գիտական արդյունքները ամփոփվել են և ներկայացվել (28.07-04.08) Եկատերինբուրգ քաղաքում կայացած միջազգային գիտաժողովում EASTMAG-2010 “Dynamic Magnetic Susceptibility of Compounds in Gd5(SixGel-x) 4):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Չեկուցումներ ի թեզիս
-	-	-	-	4	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդվածներ

1. **Հարությունյան Ն. Պ.**- “Динамическая магнитная восприимчивость соединений системе $Gd_5 Se_{2-x}Sn_{2x}(2x=0-0,1)$ ” Изв. НАН Армени, физика, т. 44, N4, с. 294-297 (2009)
2. **Հարությունյան Ն. Պ.** - “Магнитные фазовые переходы в соединениях систем $Gd_5Si_{2-x}Sn_{2x}(2x=0-0,1)$ ” - Сборник трудов XXI Международной конференции по магнетизму и магнитным материалам. - Н. П. Арутюня, Э. В. Агабабян, ГС-13659-661. Г. Москва, 2009г.
3. **Մակարյան Ա. Հ., Լալաբեգյան Ա. Բ.,**- «Գործնական խաղերի հաճույք և բավականություն պատճառելու հատկությունը որպես ուսուցման արդյունավետության ապահովման միջոց», Մանկավարժություն, քաղաք Երևան 2009, № 3-4, էջ 48-57:
4. **Макарян А. О., Аветисян Ю. О., Тадевосян В. П., Водопьянов К. Л.,**-Анализ генерации терагерцового излучения методом нелинейного смещения лазерных частот в кристалле Ga As, - Изв. НАН Армени, Физика, т. 44, № 4, Ереван 2009, с. 239-249

Չեկուցումների թեզիս

1. **Makaryan A. H., Avetisyan Yu. H., Khachatryan K., Pohosyan T.,** Terahertz time-domain spectroscopy based on using slightly curved parallel plate waveguide,- Abstracts of MPOP, Aug. 27 –Sept... 2, Yerevan, 2009, pp. 11.

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Ալավերդյան Արթուր Ջավենի,*

կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ամիրյան Անահիդ Արամայիսի, ասիստենտ
2. Օսիպովա Էլմիրա Կառլի, ասիստենտ

Համատեղողներ

1. Հարությունյան Ռաֆայել Աշոտի - կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Գուլիջանյան Անդրանիկ Հայկազի - կենս. գիտ. դոկտոր
3. Պետրոսյան Մարգարիտա Թորգոմի - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Սիմոնյան Գևորգ Սարգսի - քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Իսախանյան Հմայակ Լևոնի - քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Խաչատրյան Մեդրա Հարությունի - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Գրիգորյան Արծվի Արտաշեսի - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Աղաջանյան Ջուլիետա Արտուշի - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
9. Խառատյան Վլադիմիր Միքայելի - դասախոս
10. Մանթաշյան Հասմիկ Հրաչիկի - դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մելքումյան Արմինե Ռաֆիկի – լաբորանտ
2. Դալումյան Հասմիկ Մուշեղի – լաբորանտ

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թիվ
-	-	-	-	1	3

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. Петросян М.Т. Получения L- аспартата из фумарата аммония с помощью иммобилизованных термофильных бацилл.- Материалы 11 научной конференции Гаварского государственного университета, Естественные науки, N 11, Ереван, 2009, стр.111-116. Соавторы – Тозалакян П.В., Попов Ю.Г.

Ձեկուցումների թեզիսներ

1. **Агаджанян Дж.А., Петросян М. Т., Саакян Н. Ж., Попов Ю. Г..** - Изучение некоторых параметров биологической активности интактного растения *Ajuga chia* Schreb. и ее изолированной культуры. Доклады и тезисы 5-й

международной конференции “Современные проблемы почвенной культуры растений”, 9-11 сентября, Ереван, 2009, стр.189.

2. **Петросян М.Т., Саакян Н. Ж., Попов Ю. Г** - Каллусогенез и морфогенез в культуре in vitro шафрана посевного (*Grocus sativus* L.) - Доклады и тезисы 5-й международной конференции „Современные проблемы почвенной культуры растений”, 9-11 сентября, Ереван 2009, стр.190.

Ամփոփում ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին

Ամբիոնի դասախոսների և ֆակուլտետի ուսանողների կողմից կազմակերպվել են գիտական ընթերցումներ նվիրված շրջակա միջավայրի էկոլոգիական խնդիրներին, բնության պահպանության և նրա ռացիոնալ օգտագործման հարցերին, անցկացվել՝ ուսանողությանը հետաքրքրող հարցերի պարզաբանումներ և քննարկումներ:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկանի պաշտոնակատար՝ *Ալեքսանյան Վարդան Արամայիսի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

ՀԳ ֆակուլտետը ԵՊՀ ԻՄ-ի ամենամեծ կառուցվածքային ստորաբաժանումն է թե՞ ուսանողության թվով, թե՞ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմով: Ֆակուլտետում կազմակերպվում է ուսուցում հինգ մասնագիտությունների գծով.

-*Պատմություն*

-*Հայոց լեզու և գրականություն*

-*Հնգերանություն և մանկավարժություն*

-*Ռոմանագերմանական բանասիրություն /ֆրանսերեն լեզու/*

-*Ռոմանագերմանական բանասիրություն /անգլերեն լեզու/*

Ֆակուլտետի կառուցվածքում գործում են չորս ամբիոններ, որոնք սպասարկում են ողջ մասնաճյուղը.

-*Պատմության և քաղաքագիտության ամբիոն*

-*Հայոց լեզվի և գրականության ամբիոն*

-*Հնգերանության և մանկավարժության ամբիոն*

-*Ռուսաց և օտար լեզուների ամբիոն*

Այսօր ՀԳ ֆակուլտետում կրթություն է ստանում 529 ուսանող, որից 340-ը սովորում է պետպատվերով, 189-ը՝ վճարովի կարգավիճակներով:

Ֆակուլտետի տարբեր մասնագիտություններում վերականգնվել են նախորդ տարիներին դուրս մնացած և բանակից վերադարձած 20 ուսանողներ:

Հանրապետության բուհական համակարգում տեղի ունեցող գործընթացները ուղղակի արձագանք են գտել նաև Հումանիտար գիտությունների ֆակուլտետի բոլոր մասնագիտություններում: Հաջողությամբ ներդրվել է ուսուցման կրեդիտային համակարգը, ինչը զգալիորեն բարելավել է կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը: Նախադրյալներ են ստեղծվել ուսանողների ինքնուրույն ուսումնական աշխատանքի և ծրագրերով սահմանված կրթական արդյունքների համար: Սեմինարների և խորհրդատվությունների միջոցով կրեդիտային համակարգի հիմնադրույթները մանրամասնորեն լուսաբանվել են թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների համար: Օրերս լույս տեսավ նաև Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» բացատրագիրքը: Ֆակուլտետի բոլոր կուրսերում նշանակվել են կուրսղեկներ, որոնք դեկանատի կողմից կազմված և հաստատված աշխատանքային պլանների ու ժամանակացույցերի հիման վրա անմիջականորեն կատարում են նախանշված աշխատանքները: Նրանք ուսանողներին իրազեկում են իրականացվող փոփոխությունների մասին, հետամուտ լինում, որ ուսանողների ուսումնառությունը կազմակերպվի առավել արդյունավետ:

Ուսումնական գործընթացի կազմակերպման նոր սկզբունքները ակնհայտորեն դրականորեն են անդրադարձել ուսանողների առաջադիմության և հաճախումների վրա: Հիշյալ երևույթների զարգացմանն է միտված նաև փոխատեղման կարգի իրագործումը, որը խթանում է առողջ մրցակցություն ուսանողների շրջանում: Ակնառու է ակտիվության և կազմակերպվածության աճը ուսանողության շրջանում:

Ուսումնական գործընթացը ֆակուլտետում կազմակերպվել է ուստարվա սկզբին կազմված դասացուցակով, ուր ներառված են ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաները՝ համապատասխան ժամաքանակներով: 2009-2010 ուս. տարվա ձմեռային քննաշրջանը կազմակերպվել է քննական գործընթացի պահանջներին համապատասխան: Մինչ քննաշրջանի մեկնարկը ամբիոններում քննարկվել և հաստատվել են հարցատոմսերը: Հարցաշարերը ուսանողներին են տրվել ուսումնական տարվա առաջին շաբաթվա ընթացքում: Քննությունները և ստուգաթղթերը անցկացվել են նախապես հաստատված ժամանակացույցով: 2009-2010 ուս տարվա քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 56,1%, նախորդ քննաշրջանում այն կազմել էր 46,68%:

Վերլուծելով քննաշրջանի արդյունքները՝ արձանագրել ենք հետևյալ փաստերը. կրեդիտային համակարգով ուսուցում ստացող առաջին և երկրորդ կուրսերում արձանագրվել է առաջադիմության ավելի բարձր տոկոս, քան հին համակարգով սովորող երրորդ և չորրորդ կուրսերում: Առաջին և երկրորդ կուրսերում ավելի քիչ են գերազանցիկները, քան բարձր կուրսերում: Զննելով հիշյալ երևույթները՝ հանգել ենք հետևյալին. կրեդիտային համակարգով գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որը ներառում է մի շարք բաղադրիչներ, հնարավորություն է տալիս ուսանողին հեշտությամբ ապահովել դրական միավոր: Մյուս կողմից՝ գնահատման սանդղակի ընդլայնումը՝ 5-ից-20, դժվարացրել է 18-20 առավելագույն միավորների վաստակումը:

Պրակտիկայի կազմակերպումը ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից է: Այն հնարավորություն է տալիս ուսանողին գործնականում ստուգելու իր ստացած տեսական գիտելիքները, բացահայտելու թերությունները, ձեռք բերելու ինքնավստահություն և փորձ: Նշենք, որ ֆակուլտետի չորս մասնագիտությունների 5 կուրս /158 ուսանող/ համաձայն ուսումնական պլանի 2010թ. հունվարի 18-ից մինչև փետրվարի 13-ը չորս շաբաթ տևողությամբ անցկացրել են ստեղծագործական և մանկավարժական պրակտիկա: Տուրք չտալով նախորդ տարիների ձևական մոտեցմանն այս հարցում՝ աշխատել ենք պրակտիկան կազմակերպել այնպես, որ այն առավելագույնս ծառայի իր նպատակին: Ուրախությամբ պետք է փաստել, որ այն անցել է կազմակերպված և առավել արդյունավետ, ինչը հաստատել են համապատասխան հաստատությունների աշխատակիցները: Այստեղ տեղին է ընդգծել ուսումնամեթոդական բաժնի և պրակտիկայի ղեկավարների բարեխիղճ և արհեստավարժ մոտեցումը իրենց վստահված գործին:

Ֆակուլտետում դեկանատի և կուրսղեկների կողմից հատուկ ուշադրության առարկա է ուսանողների կարգապահությունը: Ուղիղ համեմատական կապ տեսնելով կարգապահության և առաջադիմության միջև՝ ձեռնարկել ենք բազմաթիվ միջոցներ ֆակուլտետում կարգապահությունը բարձրացնելու, անհարգելի բացակայությունները կանխելու ուղղությամբ: ԵՊՀ ԻՄ ուսման վարձի գեղջման կանոնակարգի համաձայն՝ 2009-2010 ուս տարվա առաջին կիսամյակում գեղջվել է 31 ուսանողի ուսման վարձ:

Ֆակուլտետի լավագույն երեք ուսանողներ, ըստ երեք մասնագիտությունների, առաջին կիսամյակում արժանացել են անվանական կրթաթոշակի:

Նոր համակարգի պահանջներից ելնելով՝ ֆակուլտետի ամբիոնների ջանքերով կազմվել է ձեռնարկ՝ «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար», որ հանգամանալի լուսաբանված է նոր կրեդիտային համակարգը, արտացոլված

են ուսումնական պլանով նախատեսված բոլոր կրթական ծրագրերի կառուցվածքները՝ ըստ ժամաքանակների և սահմանաված կրեդիտների:

Պատմության և քաղաքագիտության ամբիոնն ունի 21 աշխատակից, որոնցից 2-ը՝ գիտությունների դոկտոր, 6-ը՝ գիտությունների թեկնածու: 2009թ. ամբիոնի աշխատակիցները հրատարակել են գրքեր և հոդվածներ գիտական պարբերականներում:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնն ունի 16 աշխատակից, որոնցից 7-ը՝ գիտությունների թեկնածու: 2009թ. հրատարակել են գրքեր և հոդվածներ:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնն ունի 16 աշխատակից, որոնցից 1-ը՝ գիտությունների դոկտոր, 5-ը՝ գիտությունների թեկնածու: Հրատարակվել են գրքեր և հոդվածներ:

Ռուսաց և օտար լեզուների ամբիոնն ունի 18 աշխատակից. երկուսը գիտությունների թեկնածու են: Դժվար է գերազնահատել օտար լեզուների իմացության արժեքը բուհական ուսումնառության ընթացքում: Սակայն ցավով պետք է նշել, որ օտար լեզուների դասավանդումը ոչ մասնագիտական բաժիններում չի համապատասխանում պահանջվող չափանիշներին, և արդյունքում արձանագրվում է ցածր մակարդակ:

Հիմնական պատճառը հրավիրված դասախոսների՝ մասնաճյուղում աշխատանքի անհամատեղելիությունն է Երևանում ունեցած իրենց հիմնական աշխատանքի հետ, ու մաս կադրերի հոսունությունը:

Այս ուղղությամբ կատարվում են համապատասխան քայլեր:

Բուհերում այսօր մեծ դեր է վերապահված ուսանողական ինքնակառավարման մարմիններին, որոնք կոչված են լիարժեք դարձնելու ուսումնառությունը, վերաճելու ուսանողական կյանքը հագեցած և բովանդակալից **ժամանակաշրջանի**: Ֆակուլտետում գործում է ՈՒԽ և ՈՒԳԸ, որոնց անդամները մշտապես կապի մեջ են դեկանատի հետ: Ֆակուլտետում գործում են ուսանողական մասնագիտական ակումբներ, ուր կազմակերպվում են արդյունավետ քննարկումներ և բանավեճեր, ընթերցվում գեկուցումներ:

Բնավ նպատակ չունենալով մեր գործունեությունը ներկայացնել միայն պայծառ գունապնակով՝ նկատենք, որ մաս թերություններ են արձանագրվում մեր աշխատանքում. հրավիրված որոշ դասախոսներ նույն կուրսում օրական պարապում են 6-8 ժամ, ինչը բացասաբար է ազդում ուսումնական գործընթացի արդյունավետության վրա:

Ֆակուլտետում հատուկ ուշադրություն է դարձվում սեմինարների անցկացմանը: Աներկբա է, որ դասախոսությունների ժամանակ ստացած տեսական գիտելիքները մնայուն և խորը չեն լինի, եթե դրանք չամրապնդվեն սեմինարների և գործնական

պարապմունքների ժամանակ: Ասվածից բխում է, որ պետք է կարևորել սեմինարավար կադրերի ընտրության գործը:

Ֆակուլտետի աշխատանքների լիարժեք կազմակերպմանը նպաստում է մեր համագործակցությունը մասնաճյուղի մյուս բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների հետ :

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակին լավագույնս ծառայում են ուսանողության շրջանում անցկացվող սոցիոլոգիական հարցումները, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու և վերացնելու թերություններն ու բացթողումները, խրախուսելու և խթանելու դրականն ու առաջադիմականը: Ամբիոնները մասնաճյուղի ղեկավարության կողմից կրթական որակի բարձրացմանը միտված ընդհանուր քաղաքականության համատեքստում պետք է ավելի ակտիվացնեն իրենց գիտամանակավարժական գործունեությունը:

Ֆակուլտետի մասնագիտությունները

Շիֆր	Մասնագիտություններ՝
031000	Հայոց լեզու և գրականություն
030400	Պատմություն
051000	Մանկավարժություն և հոգեբանություն
031300	Ֆրանսերեն լեզու
031300	Անգլերեն լեզու

Կրթական աստիճան, մասնագիտություն	Ուսանողների թիվը՝ 523							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ.	պպ	վճ.	պպ	վճ.	պպ	վճ.
Բակալավրիատ								
<i>Պատմություն</i>	13	30	18	32	-	-	-	-
<i>Պատմություն(իրավունքի հիմունքներով)*</i>	-	-	-	-	17	23	17	25
<i>Հայոց լեզու և գրականություն</i>	13	12	10	21	11	20	13	20
<i>Մանկավարժություն և հոգեբանություն</i>	13	7	12	25	12	23	11	25
<i>Ֆրանսերեն լեզու</i>	4	8	3	14	3	2	3	9
<i>Անգլերեն լեզու</i>	9	16	4	15	2	8	-	-
Ընդամենը	52	73	47	107	45	76	44	79

* Այս մասնագիտությամբ 2007թ. ընդունելություն չի կատարվել:

**Քննաշրջանների արդյունքներ
Չմեռային քննաշրջան**

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջան ին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկնե րի թիվը	Առաջադիմ ու-թյան %- ը
		պպ	վճ.		
Բակալավրիատ					
<i>Պատմություն</i>					
1-ին	42	1	10	-	74
2-րդ	48	4	24	2	42
3-րդ	42	2	22	7	43
<i>Պատմություն * /հրավ. հիմունքներով./</i>					
4-րդ	43	6	19	8	42
<i>Հայոց լեզու և գրականություն</i>					
1-ին	25	4	5	-	64
2-րդ	32	-	11	-	66
3-րդ	31	5	18	2	26
4-րդ	34	2	15	2	50
<i>Մանկավարժություն և հոգեբանություն</i>					
1-ին	21	2	6	-	62
2-րդ	38	1	10	-	71
3-րդ	36	2	19	4	42
4-րդ	36	1	23	6	33
<i>Ֆրանսերեն լեզու</i>					
1-ին	12	-	-	1	100
2-րդ	17	1	4	1	77
3-րդ	5	1	1	1	60
4-րդ	12	1	6	3	50
<i>Անգլերեն լեզու</i>					
1-ին	25	-	1	2	96
2-րդ	20	1	8	2	55
3-րդ	10	-	3	4	70
Ընդամենը	529	32	205	45	55

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջան ին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկնե րի թիվը	Առաջադիմ ու-թյան %- ը
		պլ	վճ.		
Բակալավրիատ					
<i>Պատմություն</i>					
1-ին	43	2	17	-	58
2-րդ	50	3	24	2	46
<i>Պատմություն * /իրավ. հիմունքներով./</i>					
3-րդ	40	2	16	11	55
<i>Հայոց լեզու և գրականություն</i>					
1-ին	25	2	5	1	72
2-րդ	31	-	12	1	61
3-րդ	31	5	18	2	26
<i>Մանկավարժությու ն և հոգեբանություն</i>					
1-ին	20	2	4	-	70
2-րդ	38	1	15	1	55
3-րդ	35	1	13	11	60
<i>Ֆրանսերեն լեզու</i>					
1-ին	12	-	3	3	75
2-րդ	17	-	1	4	94
3-րդ	5	-	2	2	60
<i>Անգլերեն լեզու</i>					
1-ին	25	4	4	2	68
2-րդ	19	-	2	4	90
3-րդ	10	-	3	5	43
Ընդամենը	401	22	139	49	60

Շրջանավարտներ

Մասնագիտություն	Ընդամենը 122, այդ թվում՝ նախորդ տարիներից՝ 0
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)
Պատմություն/իրավ. հիմունքներ/*	41(8)
Հայոց լեզու և գրականություն	33(1)
Մանկավարժություն և	36(4)
հոգեբանություն	12(2)
Ֆրանսերեն լեզու	
Ընդամենը	122(15)

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 4

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Նահապետյան Ռաֆիկ Ասքանազի,
պատմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Առաքելյան Սամվել Արշավիրի - պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ալեքսանյան Վարդան Արամայիսի - պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Անանյան Գարուշ Գուրգենի - ասիստենտ
4. Մատինյան Անյա Ռուբենի - դասախոս
5. Չոբանյան Վահագն Էդիկի - դասախոս

Համատեղողներ

1. Աբրահամյան Հենրիկ Մուշեղի - պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Ներսիսյան Աշոտ Արտաշեսի - պատմ. գիտ. դոկտոր, դոցենտ
3. Հովհաննիսյան Արամ Էդուարդի - պատմ.գիտ.թեկն., դոցենտ
4. Դարիբյան Ալիկ Ավետիքի - պատմ.գիտ.թեկն., դոցենտ
5. Ալեքսանյան Հովհաննես Ստյոպայի - պատմ. գիտ. թեկ. ասիստենտ
6. Զորոյան Հակոբ Ազատի - ասիստենտ
7. Մարտիրոսյան Ռուբիկ Անդրանիկի - ասիստենտ
8. Համբարյան Վալերիա Սարիբեկի - դասախոս
9. Խաչիկյան Արտակ Զիանի - դասախոս
10. Գյոզալյան Գագիկ Շուրիկի - դասախոս
11. Հովհաննիսյան Ալբերտ Սարգսի - դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Նազարեթյան Սուսաննա Իշխանի –լաբորանտ
2. Գրիգորյան Նաթելլա Սերոփի –լաբորանտ

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումներ ի թեզիս
-	2	1	5	9	

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. **Նահապետյան Ռ.Ա.**, Աղմիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորություններն ու ծեսերը (Պատմագագազրական ուսումնասիրություն), Երևան, 2010, ԵՊՀ հրատ., 188 էջ:
2. **Ներսիսյան Ա. Ա.**, Կարո Սասունի, Երևան, 2009:

Ուսումնական ձեռնարկ

1. **Նահապետյան Ռ. Ա.** - Հայ ազգագրության պատմություն, մաս 1, Երևան, 2010, ԵՊՀ հրատ., 152 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. **Նահապետյան Ռ. Ա.**- Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, Երևան, 2009, ԵՊՀ հրատ., 180 էջ:
2. **Ներսիսյան Ա.Ա.. - Առաքելյան Ս.**, Ալեքսանյան Վ., Կիլիկիայի հայկական թագավորության ծագումը, զարգացումը և անկումը. Ծրագիր, ԵՊՀ, Հրատ., 2010, 18 էջ:
3. **Ներսիսյան Ա..- Առաքելյան Ս.**, Ալեքսանյան Վ., Հայ ազգային ազատագրական ձգտումները 16-18-րդ դարերում, Ծրագիր, ԵՊՀ հրատ., 2010, 24 էջ:
4. **Ղարիբյան Ա. Ա.**, Տասը հարց տասը պատասխան, ՀՀ և Թուրքիայի Հանրապետյան միջև դիվանագիտական հարաբերությունների զարգացման մասին արձանագրություններ, Տեսակետներ են հայտնում ԵՊՀ փորձագետները, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 13-15:
5. **Ղարիբյան Ա. Ա.**, «Հայոց Պատմություն» առարկայի դասավանդման որոշ մեթոդաբանական խնդիրների շուրջ », Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Լրատու, 1(8) Ստեփանակերտ, 2010, էջ 192-196:

Հոդվածներ

1. **Աբրահամյան Հ. Մ.**- Խորհրդային հասարակությունը հետպատերազմյան տարիներին և վարչահրամայական համակարգի ամրապնդումը (1945-1953թթ.), Տարեգիրք, Երևան, ԵՊՀ, 2010, թիվ 29-40, էջ 12:
2. **Ալեքսանյան Հ. Ս.**- Մոսկվայի, Պյատիգորսկի և Դոնի հայ գրական խմբակները 1920-1930-ական թթ., «Հայոց պատմության հարցեր», Երևան 2009, թիվ 10, էջ 278-294:
3. **Александян Ог. С.**- Участие армянских общин союзных республик в разгроме фашизма на оккупированных территориях, международная школа молодых историков АН СНГ, Минск, июнь 2010.
4. **Նահապետյան Ռ.Ա.**- Քսենոփոնի ազգագրական տեղեկությունները հայերի մասին, Տարեգիրք, Աստվածաբանության ֆակուլտետի, Դ, 2009, էջ 298-309:

5. **Նահապետյան Ռ. Ա., Մկրտչյան Ս.**, Տոները հայոց արդի կենցաղում (Էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն, Գրախոսություն, Տարեգիրք, Աստվածաբանություն ֆակուլտետի, Դ, 2009, էջ 192-196:
6. **Kharibyan A. A.**, The Social-Economic and Political situation in Transcaucasus (1918-1921), Տարեգիրք Բ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2010, էջ 72-80:
7. **Карибян А. А., Геворгян Г.**, Тенденции развития науки в ЕГУ 2005-2009 гг., Евразийский простраство, МГУ, Москва, стр. 83-88.

Զեկուցումների թեզիս

1. **Ալեքսանյան Հ. Ս.**- Հայերը Ղրիմում 1917-1926թթ., Հայագիտական 2-րդ միջազգային կոնֆերանսը Ղրիմում, Ղրիմ «Սուրբ Խաչ» 2009, էջ 1-3:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին

Ամբիոնի դասախոսների կողմից կազմակերպվել են գիտական ընթերցումների շարք հետևյալ խորագրերով.

1. Մովսես Խորենացի – 1600-ամյակ

2. Լեո 150-ամյակ

Ամբիոնը ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ կազմակերպել է գիտական ընթերցումներ նվիրված Մեծ Եղեռնի 95-ամյակին: Զեկուցումների նյութերը տպագրվել են մասնաճյուղում:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Ավագյան Վաչագան Վարազդատի, բան. գիտ. թեկ., դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Սարհատյան Աիդա Ասիլբեկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Թումանյան Լուսինե Վիլիկի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Հասանյան Ալիսա Զավենի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Դավթյան Նունե Արտավազդի, բան. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Պողոսյան Կարինե Պողոսի, ասիստենտ
6. Ադամյան Արմինե Արգամի, դասախոս
7. Սարուխանյան Մուշեղ Լևոնի, դասախոս
8. Մկրտչյան Գարիկ Գվիդոնի, դասախոս

Համատեղողներ

1. Վարդանյան Խաչատուր Գարուշի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Վարդապետյան Պերճուհի Կարապետի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Էմին-Տերյան Գևորգ Գրիգորի, ասիստենտ
4. Աղաբաբյան Վահան Արշակի, դասախոս
5. Սահակյան Աստղիկ Ալյազի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ալթունյան Նվարդ Միտուշի, լաբորանտ
2. Մեիրաբյան Գոհար Ժորայի, լաբորանտ

*Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված
աշխատանքների ամփոփում*

2009-2010թ. ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի կողմից կազմակերպվել են գիտական-գեղարվեստական միջոցառումներ՝ հետևյալ թեմաներով.

1. Խ. Աբովյանի կենսագրության առեղծվածները,
2. Մ. Աբեղյանի լեզվաբանական ժառանգության տեղն ու դերը հայ լեզվաբանության մեջ,
3. Եղեռնի 95 ամյա տարելիցը,
4. Գ. Նարեկացու աշխարհայեցողությունը,
5. Հ. Թումանյանը մեծ քնարերգու,
6. «Այրվող այգեստաններ կամ Գ. Մահարու մերժված վեպը» թեմայով գիտական զեկուցում և քննարկում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Չեկուցումների թեզիս
-	-	-	1	6	-

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1.Ավագյան Վ. Վ.- Հայ գրականության թեստեր, «Հեղինակ» Երևան, 2010, էջ 122:

1. **Մարիատյան Ա. Ա.**, Նախադասության վերլուծությունն իբրև լեզվաոճական գիտելիքների ստուգման և ամրապնդման միջոց (մեթոդական), «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», թիվ 2, 2010, էջ 37-40:

2. **Մարիատյան Ա. Ա.**, Բայի եղանակաժամանակային ձևերի ոճական դրսևորումներ Պ. Ջեյթունցյանի «Արշակ Երկրորդ» պատմավեպում, «Կանթեղ», թիվ 2, (43), 2010, էջ 112-122:

3. **Մկրտչյան Գ. Գ.**, Չայնավորների երկբարբառացման նոր փաստեր Շենավանի խոսվածքում, «Հայոց լեզու և գրականություն», թիվ 5-6, Երևան, 2009, էջ 128:

4. **Մկրտչյան Գ. Գ.**, Սահմանական եղանակի ժամանակաձևերի դրսևորումները Ապարանի խոսվածքներում, «Ջահուկյանական ընթերցումներ-2009», ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ապրիլ 2009, էջ 198:

5. **Աղաբաբյան Վ. Ա.**, Վարդի և սոխակի այլաբանության մոտիվը հայ միջնադարյան քնարերգության մեջ, Կանթեղ, Երևան, 3/43/, 2010թ., էջ 3-9:

6. **Աղաբաբյան Վ. Ա.**, Կնոջ բնավորության երևան գալը հայ միջնադարյան քնարերգության մեջ, Կանթեղ, Երևան, 3/44/, 2010թ., էջ 3-8:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Մկրտումյան Մելսիկ Պարզևի, հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Հովակիմյան Աննա Գիգուշի, ասիստենտ
2. Դուկասյան Աշխենիկ Ալեքսանի, դասախոս
3. Աբաբեկյան Լիլիթ Եղիշի, դասախոս
4. Մելիքսեթյան Վիկտորիա Գրիշայի, դասախոս

Համատեղողներ

1. Ասմարյան Քնարիկ Ժորայի, մանկ. գիտ. թեկնածու , դոցենտ
2. Հարությունյան Թամարա Սարգսի, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Սարգսյան Վաչագան Պետրոսի, բժշկ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Արամյան Լիլիթ Յուրայի, հոգ. գիտ.թեկնածու, ասիստենտ
5. Կոբեկյան Արթուր Թենգիզի, հոգ. գիտ.թեկնածու, ասիստենտ

6. Օհանյան Անուշ Համբարձումի, ասիստենտ
7. Սկրչյան Ռայա Բաղդասարի, ասիստենտ
8. Քամալյան Աննա, դասախոս
9. Սիմոնյան Էդիտա Սպարտակի, դասախոս
10. Մարտիրոսյան Անուշ Արշավիրի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ստեփանյան Լիլիթ Ռևիկի, լաբորանտ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված աշխատանքների ամփոփում

1. Առարկայական ծրագրերի թարմացում
2. Միջանկյալ ընթացիկ ստուգումների և քննությունների հարցաշարերի նախապատրաստում
3. Դասախոսների և ասպիրանտների գիտական զեկուցումների ժամանակացույցի և թեմաների հաստատում
4. Դասախոսների գիտահետազոտական, կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների վերահսկում
5. Դասախոսների, փորձի փոխանակման քննարկումներ, սեմինարներ
6. Հայցորդների աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների լսում
7. Գիտական հրատարակությունների /հոդվածներ, թեզիսներ, մենագրություններ/ քննարկում

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Չեկուցումներ ի թեզիս
-	-	-	-	12	5

Հոդվածներ

1. **Մկրտումյան Մ. Պ.**, Ազգաբնակչության պատրաստության և հոգեհիգիենայի համակարգը հավանական աղետների դեպքում, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», №1 «Չանգակ-97», Երևան, 2009, էջ 108-113
2. **Հովակիմյան Ա. Գ.**, Դպրոցականի սոցիալականացման խնդիրը ժամանակակից դպրոցում, Մանկավարժական միտք 1-2, 2009թ., էջ 69-75
3. **Քամալյան Ա. Ս.**, Սթրես-կայունության անհատական անձնական պատճառների հոգեբանական առանձնահատկությունները, Գիտական հոդվածների ժողովածու 1/38, Կանթեղ, Երևան- 2009թ., էջ 196-201:
4. **Քամալյան Ա. Ս.**, Անձի զարգացման հիմնախնդիրները ԵՊՀ «Սահմանամերձ գոտու երիտասարդների ստրես-կայունության և գործառական վիճակների դրսևորման

հոգեբանական առանձնահատկությունները» գիտական հոդվածների ժողովածու 2/43 «Աստղիկ» հրատա-րակչություն, Երևան, 2010թ., էջ 255-259

5. **Կորեյան Ա. Թ.**, Էթնոցենտրիզմը որպես միջէթնիկական անհանդուրժողական գործոն, Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրներ «Աստղիկ», Երևան, 2009թ, էջ 218-227
6. **Մկրտչյան Ռ. Բ.**, Ընտանեկության դաստիարակության կառավարման մեթոդաբանական հիմունքները, «Մխիթար Գոշ», №1, Վանաձոր, 2009, էջ 139-143:
7. **Մկրտչյան Ռ. Բ.**, Անդրադարձ «Մանկավարժություն» և «Դաստիարակություն» հասկացութ-յուններին, «Նախաշավիղ», թիվ 1-2, Երևան 2009թ., էջ 66-73:
8. **Հարությունյան Թ. Ս.**, Ինովացիաների դերը ուսանողների ինքնավարության համակարգի զարգացման գործում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», թիվ 3-4, Երևան 2009, էջ 128-132:
9. **Հարությունյան Թ. Ս.**, Հեռավար կրթության դիդակտիկական հիմքերը, «Մանկավարժական միտք», 2009թ., թիվ 3-4, էջ 118-120
10. **Հարությունյան Թ. Ս.**, Դասախոսի մանկավարժական վարպետության զարգացման մոդելը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան 2010, թիվ 1-2, էջ 151-152:
